

Բ Ա Յ Լ Ձ Ե Վ Ի Կ Յ Ա Ն
Յ Ե Ր Ր Ո Ր Դ
Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ց Ա Ն

Հ. Կ. ԱԹԵՐԵԿՏԱՆ

ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԴՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ



636:4
Ա-26

Պետերատի տպարան
Գլավիխ 7130 (բ.)
Հրատար. 20
Պատվոյր 546
Ֆիրմ 500

ԽՈՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՊԵՍ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁՅՈՒՂԻ

Խոչարուծությունը, վորպես կենդանաբուծության մի ճյուղ, Հայաստանում բռնում է շատ համեստ տեղ, իր գոյության հիմք ունենալով գլխավորապես անտառային արտատեղերը: Նրա քանակի աճումն ու նվազելը նախկին տարիներում սովորաբար կախված էր զանազան համաճարակներից և անտառների խոզակաղինի և հաճարի բերքից: Վերջին ժամակակները, մանավանդ 1930 թ., այդ տատանումները բացատրվում են քաղաքականության խեղաթյուրումով տեղերում, և կուլակի ագիտացիայի ազդեցությամբ, խոզերը գիշատիչ կերպով մորթելու ետևանքով:

Հայաստանի պայմաններում, կենդանաբուծության վերակառուցման պրոցեսում, բանվոր դասակարգին մթերքներ, և առաջին հերթին միս և կաթ, մատակարարելու պահանջից լեյնելով, առաջ է դալիս լերկու ճյուղերի՝ կաթնատնտեսության և խոզաբուծության զարգացման անհրաժեշտությունը, վորոնք մարդուն տալիս են սննդի շատ գնահատելի լերկու մթերքներ—կաթ և միս-ճարպ:

Յեթե ուշադրության առնենք, վոր ներկայումս մսա-ճարպային կրիզիսի լուծումը հանդիսանում է կուսակցության և կառավարության ակտուալ խնդիրը, այդ դեպքում խոզաբուծության վրա, վորպես մեծ քանակությամբ մսա-ճարպային մթերքներ արտադրող ճյուղի, անհրաժեշտ է հատուկ և բացառիկ ուշադրություն դարձնել, ընդարձակելով նրա ապրանքային մասը: Իրան հասնելը դժվար չէ, յեթե ուշադրության առնենք, վոր միս ստանալու համար խոզ աճեցնել, համարյա ամեն տեսակ կերի պայմաններում, կարելի լի ավելի և շուտ թե քաղաքում և թե գյուղում, քան կովը, այն էլ Հայաստա-

Հանձնված է արտադրության 18/III 1932 թ. Ստորագրված է սպեյու.3/III 1932



37879-62

նում, վորտեղ կա բազարար քանակով կաթի ավելցուկ և անտառի ձրի կեր—խողակաղին, այդ յերկուսը միասին կարող են փոխարինել եժան միս-ճարպ արտադրելու համար կերի պահանջը համարյա կեսը:

ԽՈՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՇԱՆԱՎԵՏ ԿՈՂՄԵՐԸ

1. Ոգտավետ կերպով կարելի չէ խոզեր բազմացնել և բուծանել ամեն տեսակ կերի պայմաններում՝ թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում:

2. Խոզը, վորպես ամենակեր կենդանի, հանդիսանում է արտակարգ հարմար կենդանի-մեքենա ամեն մի տնտեսություն համար, ավելի եժան բուսական և կենդանական մթերքներն ավելի թանգազինների—ճարպ և միս դարձնելու գործում:

Ճարպ և միս ստանալու համար նրանք պահանջում են յերկու յերեք անգամ պակաս կեր, քան կենդանիների մյուս տեսակները:

Այսպես, որինակ՝ յեթե յեղջուրավոր անասունի մարմնում մի կիլոգրամ միս աճեցնելու համար հարկավոր է ծախսել 12—14 կգ. և վոչխարի վրա՝ 8—10 կգ. հացահատիկ, այդ դեպքում խոզը նույն կիլոգրամի աճումը կտա, սպառելով ընդամենը 3—6 կգ. նույն հացահատիկից:

3. Խոզերին հնարավոր է պահել գոմերում, խառը (և գոմում, և դրսում) և արոտատեղերում, նայած կլիմայական և տնտեսական պայմաններին:

4. Խոզը շատ բեղմնավոր կենդանի չէ և մի տարվա ընթացքում 2 անգամ ծնելով՝ կարող է տալ միջին թվով 14—16 ուժեղ խոճկորներ:

5. Խոզն, ի տարբերություն խոշոր և մանր յեղջուրավոր անասունների, տալիս է ամենաբարձր քաշը մորթած վիճակում: Այսպես, որինակ, խոշոր յեղջուրավոր անասունի տված 46—52% կենդանի քաշի դիմաց խոզը տալիս է 72—85% վորպիսին կախումն ունի ցոլից, հասակից և գիրացումից:

6. Խոզի միսը հանդիսանում է հիանալի հումուլթ յերկար դիմացող արժեքավոր սննդամթերք—վիտչինա, բեկոն (անգլիական յեղանակով պատրաստած աղած միս), յերշիկ և զանազան տեսակ ճարպ պատրաստելու համար:

Խոզի հատկությունների և առավելությունների այս ցուցումներն անգամ բավական են ցույց տալու, վորպես միս-ճարպ արտադրողի, վորպեսզի Հայաստանում խոզաբուծության վրա ուղղորդություն դարձնեն և խոզաբուծության համար համապատասխան տնտեսական բազա ստեղծեն՝ նրա արդյունաբերական ապրանքային զարգացման համար, կենսոնացնելով ամբողջ պլանային աշխատանքը սոցիալիսական սեկտորում (խորհանտեսություններում, կոլտնտեսություններում և սիստեմում):

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՐ ՇԻՄԲՆ Ե

1930 թ. յերկրորդ կեսից Հայաստանում նկատվում է խոզաբուծությունն ուժեղ զարգացնելու և վորակապես բարելավելու ձգտում: Գուսակցության և կառավարության դիրեկտիվներին համաձայն, արդյունավետ անասնապահության բարձրացման բնագավառում խոզաբուծությունը ներկայումս հանդիսանում է կարևորագույն խնդիրներից մեկը:

Յերևանի, Թիֆլիսի, Բազմի և ուրիշ քաղաքների գործարանային արդյունաբերության հարատև զարգացումը բազմացնելով բանվորության և աշխատավոր մասսայի քանակը քաղաքներում, զգալիորեն բարելավելով չքավոր-միջակ տնտեսությունների վիճակը, վորոնք միաձուլվել են կոլտնտեսություններում,—բնականաբար բարձրացնում է մսա-ճարպային մթերքների պահանջը, վորոնց մասնավոր բավարարումը հնարավոր կլինի կատարել մսա-արդյունաբերական խոզաբուծության զարգացմամբ:

Այդ ուժեղ պահանջը կարելի չէ միայն բավարարել խոզաբուծական խոշոր խորհանտեսություն և կոլտնտեսություններ կազմակերպելով: Վերջիններում խոզերին համայնացնելը

պետք է խոշոր դեր խաղա համայնացրած խոզաբուծութեան մասըդուներական զարգացման գործում, վորը կուտընտեսութիւններին բացի մեծ ոգուտներ տալուց կոզնի շուտով վերացնելու մասմթերքների պակասը յերկրի ներսում և հետագայում կտա նշանակալից քանակով մթերքներ Հայաստանի սահմաններից դուրս արտահանելու համար:

Խոշոր խոզաբուծական տնտեսութիւններին — խորհանտեսութիւններին և կուխոզներին կազմակերպումը, հանդիսանալով հուսալի և հզոր վարչատնտեսական և քաղաքական բազա, հետևյալ առավելութիւններն ունի.—

1. Հեշտ է լինում խոզերի համար լավ, տաք, լուսավոր և չոր շենքեր կառուցել, վոր տնտեսում է շատ կեր, պահպանում է կենդանու առողջութիւնը և նպաստում է արտադրանքի բարձրացմանը:

2. Խոշոր խոզաբուծական տնտեսութեան մեջ—ինի այդ խորհանտեսութիւն կամ կուխանտեսութիւն—անասունին խնամում են վորակյալ մարդիկ, փորձված խնամելու և կերակրելու գործում:

3. Նրանց անասնաբուժական ոգնութիւնը մոտիկ ապագայում կզրվի անհրաժեշտ բարձրութեան վրա, ձեռք առնելով համապատասխան գիտական պրոֆիլիակտիկ և սանիտարա-առողջապահական միջոցներ:

Հաշվի առնելով և բարձր գնահատելով խոշոր տնտեսութեան գրական և շահավետ կողմերը, Հայաստանն առաջին անգամ 1931 թ. անցել է խոշոր կուխակտիվ խոզաբուծական ֆերմաներ կազմակերպելուն:

Կուխակտեարոնի գծով յենթադրվում է Դիլիշանի, Իջևանի, Ղափանի, Շամշադինի, Ալլահվերդու և Ղարաքիլիսայի շրջաններում հիմք դնել այդ տեսակ խոշոր տնտեսութիւններին: Իսկ Հայկոտայի գծով կազմակերպվում են Յերևանում, Լենինականում, Ղափանում, Ալահվերդում և Ղարաքիլիսայում մերձ-քաղաքային տնտեսութիւններ:

Արդյունաբերական խոզաբուծական ֆերմաների և մերձ-քաղաքային տնտեսութեան կազմակերպման հետ միատեղ և

նրան զուգահեռ յենթադրվում է ստեղծել ցեղական խոզերի բեղմնականներ, վորոնց նպատակն է առաջիկա յերկուլից յերեք տարիներին յենթացում արդյունաբերական կուխանտեսութիւններին մատակարարել ցեղական արտադրողներ, ներկայիս յեղած խոզերը վարակապես լավացնելու համար:



Նկ. 1. Յերևանի կաթնահամապահական կուխանտեսութեան բարելաված խոզերը:

Մեր մտառակ խնդիրն է տեղական (անտառի) դժվար և ուշ աճող ու քիչ քաշ ունեցող խոզը դարձնել կուխակտեարական, շուտ աճող, ծանր քաշ ունեցող խոզ:

ԻՆՉՊԵՍ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԽՈՉԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՆՅՆԵԼ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԽՈՉԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ

Անկուլտուր խոզաբուծութիւնից կուլտուրական տնցնելու համար հիմնական բազա հանդիսանում է հանրապետութեան ներքում, տեղական պայմաններում աճեցրած և կլիմային վարժեցրած բավարար քանակով ցեղական խոզերի առկայութիւնը:

Ուստի, հարվածային մոմենտ պիտի համարել ներկայումս այդ տեսակ բազայի ստեղծելը: Միութեանական կառավարութիւնը թուլատրել է ներմուծել Հայաստան 308 վարազ, ցեղական արտադրողներ և 268 ցեղական մերուններ, վորոնք մեր առաջ այդ ուղղութեամբ լայն հեռանկարներ են բաց առնում: (1931 թ. յերկրորդ կեսին արդեն ներմուծված են 220 ցեղական վարազներ և 110 ցեղական մերուններ):

Ընդհանրապես աարվա ընթացքում արտադրողների աչք թվով պետք է բեղմնավորել մոտ 9.000 մերուն, կամ լերկու անգամ բեղմնավորելու դեպքում՝ 18.000 մերուն, վորի հետևանքով հնարավոր է սպասել կեսով զտարյուն սերունդ—մոտավորապես 110.000 խոճկորներ, վորոնցից 50%-ը կկազմեն եզերը: 55.000 խոճկորների թեկուզ 30 %-ը (16 500 դուլիս) հանրապետության մեջ պահելով, Հայաստանում մերունների բազմությունը կփոխարինվի կիսազտարյուն խոզով, ունենալով ազնվացեղ կուլտուրական խոզի հատկություններ: Հետագայում աչք կիսազտարյուն խոզերի հոսք ավելի ևս ազնվացնելու համար մեծ, խորացրած աշխատանք է պետք, վորի հետևանքը կլինի այն, վոր խոզը կզանա զտարյուն, կուլտուրական, վորին հնարավոր է գիրացնել 2—3 տարեկանի փոխարեն ավելի շահել հասակում (մինչև մեկ տարեկան):

Իսկ ինչ վերաբերում է 268 ցեղական մերուններին, պետք է ասել, վոր նրանք 6 ցեղական խոզակալաններ կազմակերպելու համար հանդիսանում են հիմնական մարտական կորիզ, վորտեղ կարտադրվի ցեղական խոզ՝ արտադրողների պակասը լրացնելու համար:

Այդ լերկու միջոցառումները՝ խոզակալաններն ու բեղմնակալանները հանդիսանում են հիմնական միջոցառումները, վորոնք մետիզացիայի միջոցով ծավալելու յեն Հայաստանում կուլտուրական ապրանքային-արդյունաբերական խոզաբուծությունը:

ԻՆՉ ՑԵՂԻ ԽՈՅԵՐ ՊԵՏԲ Ե ԲԱԶՍԱՑՆԵԼ

Վերևում մենք հիշեցինք, վոր պետք է խոզաբուծությունը Հայաստանում բարելավել, բայց վոր տեսակն ընտրել, անհրաժեշտ է մեր այստեղյա խնդիրը:

Կոլտեսականները պետք է լավ իմանան, վոր մեծ ոգուտ կարող է ստացվել վոչ թե ամեն տեսակ խոզից, այլ միայն լավ, կուլտուրական խոզից, ինչպես ասում են խոզաբուծները, ուստի ամենից առաջ հարկավոր է ծանոթանալ խոզերի ցեղերի հետ:

Այսպիսով խոզերի բազմաթիվ տեսակներ կան, բայց մեզ համար կարևոր է ուսումնասիրել անգլիական կուլտուրական խոզի տեսակները, վորոնք շատ տարածված են մեր Միության մեջ:

Մեր անկուլտուր, անտառի խոզերի մասին շատ խոսել չաքժի, վորովհետև ամեն մի դուրդացու քաջ հայտնի յե նրա մի շարք բացասական կողմերը, վորոնք են՝ դունչը նեղ և լերկար է, առաջն ու լետերը նեղ է, աճուկները վեր քաշված, մեջքը ծուռ է, շատ ել արդյունավետ չէ, սովորաբար ունի հինգ զուգ ստիսկներ և ամեն անգամ ծնվի՝ տալիս է 4—6 խոճկոր, դանդաղ է աճում, միսը կշռում է 30—40 կիլոգրամ: Բտղւմ են 2—3 տարեկան հասակում, համեմատաբար քիչ միս ճարպ է տալիս, իսկ մեծ մասը կազմում են վոսկորները, կաշին և վորոտիքը:

Միակ դրական կողմն այն է, վոր նա լերկուր վոտներ ունի, վորի շնորհիվ տեղական խոզը շատ հեշտությունը շարժվում է լեռնային անտառներում:

Այդ տեսակ անկուլտուր խոզը բոլորովին ձեռնառու է շահավետ չէ կոլեկտիվ և խորհրդային անտեսություններում բազմացնելու:



Նկ. 2.

Ուշ հատունացած, վոչ-կուլտուրական խոզը:

Բոլորովին հակառակը պետք է ասել անգլիական խոզերի տեսակներին մասին: Անգլիական խոզերի այն տեսակները, վորոնք համարվում են ամենալավերը, կարելի յե բաժանել լերկու խմբի:

1.) Սպիտակ խոզեր, վորոնց իմիջի ալլոց պատկանում են անգլիական խոզը սպիտակ խոզերը, վորը մեզանում սովորաբար կոչւմ են «բրեկիերներ» և 2.) սև խոզերը, վորոնց մեջ ամենից հայտնի յեն բերկշիբները:

Ինչպես սպիտակները, նույնպես և սև անգլիական խոզ-

ըը հանդիսանում են անդլիական խոզաբուծիչների համառ աշխատանքի արդյունքը: Այդ բարձր կուլտուրական կենդանիների ստեղծել է վոչ միայն բնությունը, այլև մարդկային հզոր



Նկ. 3.

Վաղ հասունացող անդլիական սպիտակ խոշոր խոզ.

ձեռքը, վոչը բնության զգործողություններն ուղղել է՝ անտեսության համար ստեղծելու խոզի մեջ շահավետ հատկություններ:

Անդլիական բոլոր խոզերն ընդունակ են արագ աճելու և սեռական կարողության հասնելու, վոչի պատճառով նրանք կոչվում են

շուտ հասունացողներ: Շուտ աճելը— դա կենդանու շատ կարևոր հատկությունն է, վորովհետև տարբեր հաշիվ է 1 թե 2—3 տարվա ընթացքում կենդանին կարող կլինի տալ 120—130 կիլոգրամ ճարպ և միս:

Անդլիական խոզերի մեծամասնությունը համապատասխան խնամք և կեր ունենալու դեպքում, իրենց կյանքի հենց առաջին տարում համարյա վերջացնում են աճելը: Անդլիական խոզերը ամենից արագ աճում և կերն ամենալավ կերպով ոգտագործում են իրենց կրակի առաջին 5—7 ամսական հասակում, այդ հասակում նրանք



Նկ. 4.

«Բերկերի» անդլիական սև խոզի ցեղ.

մեկ կիլոգրամ են ստանալու դեպքում տալիս են ամենամեծ քանակի միս: Իրանից հեռուում է, վոր Չանել հասակում խոզի միս ստանալը պահանջում է քիչ ծախս, քան այդ նկատելի յե միջին և ծեր հասակում:

Յեղական խոզերի այդ առավելությունը շատ կարևոր է խոզաբուծության վերակառուցումը կատարելու համար, ստեղծելով կուլտուրական արդյունաբերական խոզաբուծություն, խոզերին Չանել հասակում բաելու միջոցով:

Այսպիսով, մսա-ճարպային կրիզիսի դեմ պայքարելու և կոլտեստություններում և խորհանտեսություններում ապրանքային անտեսություն ստեղծելու գործում անհրաժեշտ է բարելավել մեր խոզաբուծության վորակը. տեղական մերունները բեղմնավորել անդլիական սպիտակ վարագներով (խոշորներին, միջակներին հետ), և վորպես վորձ՝ խոզաբուծական շրջաններից մեկում զուգավորումը կատարել սև ցեղի (բերկչի) վարագների հետ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՉԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՏԱՐԲԵՐՈՂ ՆՇԱՆՆԵՐԸ

Անդլիական խոզերի տեսակների արտաքին նշանների ու ներքին հատկությունների գլխավոր գծերը հետևյալներն են.—

Անդլիական խոզերի մեջըր ուղիղ և իր ամբողջ յերկարությամբ միակերպ լայն է: Յերբեմն գավակը մի քիչ կախ է ընկած լինում ուղիղ մեջքից, բայց թեք չպետք է լինի: Իրանը յերկար է, բայց դրա հետ միասին լայն են թիակները, կուրծքը և ազգրերը, կուրծքը խոր է:

Կողերը լայն են, աճուկը լավ լցված, ազգրը հարուստ է մկաններով: Վոտքերը պետք է ուժեղ լինեն և վեգերը պինդ, միջին յերկարություն: Վիզը լայն է, բայց կարճ, կազմելով մեջքի գծի սկիզբը:

Ուղիղ պրոֆիլով գլուխը յերկար է, ճակատը և այտերը լայն, քթաբմառի մասում փորրիկ կորություն: Իրանը ծածկված է թավ, բայց վոչ կոշտ խոզամազով: Գլխի այգսլիսի կողմությունը հարմարագունն է Հայաստանի պայմաններում, արտատեղերում խոզեր պահելու: Բայց կան անտեսություններ,

վորոնք լավ խոզի վերաբերմամբ առաջադրում են միջանի այլ պահանջներ:

Այդ պահանջները գլխավորապես վերաբերում են գլխի և վտոքերի կազմվածքին: Այդ անտեսատեր խոզաբույժները գնահատում են թթառ խոզին, թթառությունը հաշվելով վորպես տեսակի պարտադիր նշան: Ետո ասում են, վոր ցեղական խոզը պետք է ըստ հնարավորին ուշենա կարճ, բարակ և համարյա բոլորովին մերկ վոտներ:

Այդ տեսակ պահանջները շատ մասնագետների և պրակտիկների կարծիքով բոլորովին ճիշտ չեն, Կորովհետև խիստ թթառ խոզերը կերակուրը վատ են ծամում, վորք բացատրվում է նրանով, վոր նրանց վերին ծնոտի առամները չեն ընկնում ներքին ծնոտի առամների վրա: Վատ ծամած կերը, հատկապես հացահատիկը, վատ է մարսվում, ուստի և դա նրա մարմնում գնում է շատ ճարպմիս գոյացնելու վրա, քան վոր թթառ խոզերին: Բացի դրանից, թթառ խոզերի բտելու ժամանակամրջոցում նկատվում է զգվար շնչառություն և թթրց արյունահոսություն է լինում:

Այս նկատառումների հիման վրա ժամանակակից լավ խոզաբույժները թթառությունը լավ խոզերի համար արատ են համարում:

Կարճ և բարակ վոտները նույնպես անպետք են ծանրաքաշ խոզերի համար, վորովհետև այդ տեսակ վտոքերը չեն կարող խոզերի մարմնի մեծ ծանրություն տակաւորեն կրել իրենց վրա և իրվանդանում են: Ուստի անգլիական լավ ցեղական խոզերից պահանջվում է անպայման պինդ, բարձր վոտներ ունենալ:

Հայաստանի, հատկապես նրա լեռնային և նախալեռնային շրջանների համար վերջին բացատրությունները շատ կարևոր են, վորովհետև մեզնում խոզաբուծությամբ գլխավորապես զեռ և փղբաղվում են լեռնային անտառապատ շրջաններում (Դիլիջանում, Իջևանում, Շամշադինում, Ղափանում, Ալանկերգում), վորոնցում տեղական բնական պայմաններն ուռնելիք, ոգտագործվելիք արտատեղերը (բնական և արհեստական) հնա-

րավորություն չեն տալ բազմացնելու կարճավոտ խոզեր, վորք կրժվարացնի կերի ոգտագործումը և կենդանիների տեղավոխությունը թեք և անհարթ տեղերում:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍՊԻՏԱԿ ԽՈԶ

Անհրաժեշտ է ծանոթանալ անգլիական սպիտակ խոզերի լերկու ցեղի հետ—խոշոր սպիտակի և միջակ սպիտակի հետ:

Առաջին ցեղը մեծ հուշակ ունի շատ լերկներում և նույնիսկ մեր Միության մեջ: Նրան մեզանում հաճախ յորկչիք են անվանում:

Խոզի այդ ցեղին հատուկ են վերը հիշված բոլոր լավ հատկությունները: Նրանք թե արագ են աճում և թե շուտ ելլանում են իրենց քաշը:

Խոզի թոռ պրակտիկ խոզաբույժներն իրենց խոզերի աճելն այն ժամանակ են ճիշտ համարում, լերք նրանք բուսված վիճակում կշռում են այնքան փութ, վորքան ամսական են իրենց ծնված որից, հանելով գումարից մի փութը: Այսպես, որինակ, 6-ամսյա խոճկորը պետք է կշռի 82 կիլոգրամ (16,4×5 ամիս), 9 ամսականը՝ 131 կիլոգրամ (16,4×8 ամիս), իսկ տարեկանը՝ 180 կգ. (16,4×11):

Իսկ ցեղական խոզերի համար լավ աճ է համարվում այն լերք մի ամսական խոճկորները, միջին թվով, քաշում են 8,5 կգ., լերկու ամսում՝ 14 կգ., 3 ամսում՝ 33 կգ., 4 ամսում՝ 48 կգ., 5 ամսական խոճկորները՝ 56 կգ., 7 ամսականը՝ 80 կգ. և 8 ամսականը՝ 90 կգ. և, վերջապես, տարեկանները՝ 140—160 կգ., այսինքն՝ այնքան փութ, վորքան ամսական են, առանց լերկսի-լերեքի:

Ուժեղ բուսան դեպքում խոշոր անգլիական խոզերն աճում են ամբողջ մարմնով 0,6—0,8 կգ. որական: Պողաբերությունը բավական բարձր է, միջին թվով 14—16 խոճկոր ծնելը հազվագյուտ լերկութի չե: Այդ ցեղի խոզերը ջահել հասակում տալիս են շատ համեղ միս, ունենալով մկանների արանքում ճարպի նուրբ շերտ, վորից միսն ստանում է մարմարի տեսք:

Լավ բովանդակ վիճակում հասուն խոզերն ունենում են մինչև 3—4 ցենտներ կենդանի քաշ:

2-րդ տեսակը միջակ սպիտակ անգլիական խոզն է, վորը տարբերվում է խոշորից իր արտաքինով, գլխավորապես նրանով, վոր նա ավելի փոքր է, այդպես ահռելի չափերի չի հասնում, ինչպես խոշորը: Անգլիական միջակ սպիտակ խոզը հասակն առած դրուժյամբ քաշում է 1,5-ից 2 ցենտներ միայն: Խոշորից տարբերվելու իրրև նշան էլի կարող է ծառայել կարճ, ավելի բութ դուռնչ, ավելի կարճ վոտներ:

Միջակ սպիտակ խոզն ունի այն բոլոր ձեռնատև տնտեսական հատկությունները, ինչ վեր խոշորը, միայն սրա միսն ավելի ճարպոտ է:

Այդ ցեղի բովանդակ խոզերը մի տարեկան հասակում տալիս են հեշտաթյամբ ճարպոտ միս, մոտավորապես 1 ցենտներ քաշով:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍԵՎ ԽՈՉ—ԲԵՐԿՇԻՐ

Բերկշիր (սև) խոզի ամբողջ մարմինն ունի միապաղաղ սև դուռն, վոտքերի, դնչի և պոչի ծայրերին կան սպիտակ նշաններ և փոքրիկ բիծ ճակատին:

Բերկշիրներն իրենց մեծությունը և արտաքին նշաններով ավելի շատ նմանվում են միջակ սպիտակին, բայց ըիչ խոշոր են վերջինից:

Նրանք ոժտված են անգլիական խոզի բոլոր լավագույն հատկություններով, և զժվար է ասել, թե վորն է գերադասելի, խոշոր սպիտակը, թե բերկշիրները: Վերջին հարցի շուրջը Անգլիայի և Ամերիկայի գիտուն-խոզաբույժները վիճում են և մինչև այժմս վոչ մի կերպ չեն հանգում այդ խնդրի լուծմանը: Յեթե դատենք՝ թե Անգլիայի և թե Ամերիկայի տնտեսություններում տարածված են բերկշիրները, ապա պետք է ասել, վոր այդ լերկու ցեղն էլ խիստ շատ տարածված են, ուստի և նրանք համարվում են լավերը:

Մեր պայմաններում առայժմ սակավ փորձված տվյալներ կան այն մասին, թե նրանցից վորը հարմար կլինի պահել, բայց

կան միջանի դիտողություններ այն մասին, թե բերկշիրները, վորպես թե ավելի հարմարված են արոտասեղերում ապրելու, քան խոշոր սպիտակը, վոր նրանք դիմացկուն են սպիտակներից և արքան էլ զգալուն չեն դեպի միջանի վարակիչ հիվանդությունները: Այդ հատկությունները շատ արժեքավոր են Հայաստանի պայմաններում և մեզ համար կարելի լի սկսել բերկշիրները վրա փորձական աշխատանք՝ թեկուզ մեր խոզաբուծական շրջաններից մեկում, այդ աշխատանքի համար ընտրելով խոշոր խոզաբուծական կոլտնտեսությունները:

ԽՈՉԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՁՆՎԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԱՐԴՅՈՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ ՄԻԱՅՆ ԿՈՒԼՏՈՒՐՍԿԱՆ ԽՈՉԻ ՄԵՏԻՋԱՑԻԱՅՈՎ

Կոլտնտեսականները և ընդհանրապես գյուղացիները կարգավոր գանազան հողվածներ և մասնագիտական գրքուկներ, մտածում են, թե հարկավոր է ամբողջ հույսը դնել ցեղի վրա և արժե միայն ունենալ ցեղական կուլտուրական խոզեր, և խոզաբուծությունը կընթանա ցանկացած ուղիով:

Արևմտյան Յեվրոպայի պետությունների, Ամերիկայի և ԽՍՀՄ միջանի փորձակայանների բազմամյա փորձն ու պրակտիկան պարզ կերպով ապացուցում են, վոր ցեղական ու արդյունաբերական խոզաբուծության դարգացման և ազնվացման գործում հակառակն նշանակություն ունի ճիշտ կերպով կերակրել, պահել և խնամել կարողանալը:

Առանց վերջինների, վոչ մի կուլտուրական ցեղ ցանկալի արդյունք չի տա: Ավելի պարզ լինելու համար բերենք հետևյալ օրինակը, վորը տեղի լի ունեցել Մոսկվայի Տեմերյազեվի գյուղատնտեսական ակադեմիայում: Վերցրել են յերկու միևնույն մորից և միևնույն սերունդից խոճկորներ և յենթարկել սնուցման փորձի, պահելով կերակրման գանազան պայմաններում:

Նրանցից մեկն ստանում էր շատ կաթ, հացահատիկ և ավելի ըիչ՝ կոպիտ կեր, մյուսը, ընդհակառակը՝ ըիչ կաթ և հացահատիկ և ավելի շատ՝ կոպիտ կեր: Փորձաշրջանն անցնելուց

և դժադրը հավաքելը Աղբահորը պետք է գանգի խողովո-
մից 50 մետրից փոչ մտաիկ:


Տեղի. ընտրութիւնը անպայման անհրաժեշտ է համաձայ-
նեցնել տեղական անասնաբուժական հոկոդութիւն հետ:

Շինանյութ. — Հայաստանում գյուղական պայմաններում
կան մեծ քանակով շինանյութեր, ուստի և նախած տեղում
արև կամ այն նյութի գանձելու, հնարավոր է կառուցել քարե,
կավաշեն, ձգտտե-կավաշեն, հարդի և կրա-ավազախառն շեն-
քեր, յեղեգնածածկ, հողածածկ, կղմինդրի և կավե ու ձգն-
տից շինած կառուցներով: Վերջիններս ձմեռը տաք են, իսկ
ամառը զով են, կրակի դիմացող և ամուր:

Սողազոմների շենքերի բարձրութիւնը կարելի չէ հասցնել
2,00 մինչև 2,60 մետրի:

Լուսավորություն. — Ապակի դցած լուսամուտների մակե-
րեսի հարարերութիւնը հատակի նկատմամբ, բավող խողերի
համար 1/20 է, իսկ ցեղական և արդյունաբերականների հա-
մար 1/15 է:

Ողափոխություն. — Ողանցքներ, ունենալը պարտադիր է և
փորպես ավելի հասարակ սխառեմ կարելի չէ հանձնարարել
մյուսերի խողովակները, իսկ ավելի լավ է կիրգի:



Նկ. 8.

Մյուսերի սպանջը:

Մյուսերի խողովակի
ներքին խտորնակի կը-
տրվածքը 0,40 X 0,40
մետրից ավելի չպետք
է լինի, իսկ պատերը
պետք է շինվեն տախ-
տակներից 44—50 միլի-
մետր հաստութիւն:

Սողովակների քանակի
ցույց տված չափը շե-
նում են այն հաշվով,
փոր մի խողովակը բա-
վարարի 8 դուրս խոշոր
խողերի և 16-ից 20 դը-
րուս խոճկորների:

Հասակներ. — Հավազակները համարվում են բետոնի հա-
տակները: Սողաքի հետևի կետում բետոնի հատակը տաքու-
թիւն համար պետք է ծածկված լինի տախտակով, հատակից
12-ից 15 սանտիմետր բարձրութիւն վրա:

Սյդ տախտակները պետք է շարժական լինեն մաքրու-
թիւն հարմարութիւն և ախտահանութիւն համար:

Սողազոմների սարդուրյունը. — Սողազոմեր կարելի չէ կա-
ռուցել թե ցեղական, թե արդյունաբերական խողեր պանելու
և թե խողեր բուխու համար: Սյդ պանելները, վորոնք առա-
ջադրվում են ցեղական խողազոմերին, շատ ավելի մեծ են և
խիստ, քան այլ տեսակ կառուցվածքներին: Սողորական ցե-
ղական խողաքները կառուցվում են 30—40 դուրս խողի հա-
մար և կառուցվում են շենքեր, մերունների համար առանձին
և ջանիների համար առանձին, այն հաշվով, վոր վերջինի սը-
նուցելը տեղի մինչև 6 ամսական հասակը, վորից հետո ջանի-
ներին, բացառութիւնը ցեղի համար թողնվածները, պետք է
հանձնել կոլ և խորհանստութիւններին:

Յեթե ընդունենք վորպես որենք այն, վոր յւրաքանչյուր
ցեղական մերուն պետք է սնուցի 6—8 փոչ ավելի առողջ
խոճկորներ, այդ դեպքում պետք է ջանիների համար կառու-
ցել 180—320 դլիսի հաշվով:

Հիվանդ խողերի համար շինվելիք մեկուսարանը պարտա-
դիր է: Մեկուսարանը խողազոմից պետք է լինի 100 մետրից
փոչ մտա և չափը պետք է բավարարի անտեսութիւն խողերի
ընդհանուր քանակութիւնից յեղնելով 5% խոշոր խողերի և
10% ջանիների համար: Ցեղական խողերը (մերուն և վարազ)
պահվում են առանձին վանդակներում, վարազի համար չափ
պետք է 4,00 քառակուսի մետրից փոչ ավելի, իսկ մերունի
համար 6—7,5 քառակուսի մետր, վորից 2,00—3,00 քառա-
կուսի մետր բաժին է ընկնում խոճկորներին, վորոնք մինչև
յերկու ամսական հասակը գանձվում են մոր մոտ:

Ցեղական ջանիները կարող են տեղավորվել ընդհանուր
վանդակների մեջ առանձին ըստ սեռի 5—10 դուրս և ամեն
մի գլխի համար պահանջվում է 0,80—0,90 քառ. մետր տարա-
ծութիւնից փոչ ավելի:

Արդյունաբերական խողազոմերը կառուցվում են 50, 100, 200 և ավելի գլխի համար, վորը կախումն ունի կոլանտեսության և խորհանդեսության մեծությունից և կարողությունից, ընդվորում նրանք կարող են առանձին շինքեր լինել 30—50 գլխի համար կամ մի հարկի տակ, բայց իր ներսում բաժանված լինեն առանձին հատվածների (սեկցիաների) ամեն մեկը 50 և 100 գլխի համար: Այդ տեսակ տարբերությունը կախված է ինչպես զուտ տնտեսական, այնպես և հատկապես սանիտար-առողջապահական և հակահրշեջային նկատառումներից, նույնպես և շրջապատող կուլտուրական պայմանների աստիճանից: Հայաստանի պայմաններում կարելի լի հանձնարարել այնպիսի խողազոմերի կառուցում, վորոնք բաժանված լինեն 100 գլուխ մերունների համար, վորոնք բաժանված լինեն յերկու սեկցիայի, վորպեսզի վարակիչ հիվանդություններ չերկարու դեպքում (անասունի համաճարակ) կարելի լինի մեկ բաժանմունքը մյուսից առանձնացնել:

Արդյունաբերական խողերի համար վանդակները շինվում են 7,00—7 50 քառ. մետրի հաշվով, նկատի ունենալով, վոր մեկ վանդակում հնարավոր է պահել 2—3 գլուխ հղի (հղուության առաջին շրջան) և ստերջ մերուններ, վոր ժամանակ կանտեսի կերը բաժանելու և խնամելու գործում:

Բտելու համար խողազոմերը կառուցվում են 300 և ավելի գլխի համար, վորը կախումն ունի արդյունաբերական հոտի մերունների քանակությունից: Յեթե, որինակ, լուրջաքանչյուր մերունից 6 ապրանքային խոճկորներ ստանալը համարենք պարտադիր, այդ դեպքում 200 մերուն ունեցող արդյունաբերական կոլանտեսության համար պահանջատեղ է կառուցել բոլոր շինքեր մեկ սերնդից լեղած 1200 գլխի համար, ընդվորում այդ քանակը, նկատի առնելով վերոհիշյալ նկատառումները, կարելի լի տեղավորել 3, 4, 5 և 6 խողազոմերում, վորը կամ մի հարկի տակ գտնվող խոշոր շինքերում:

Ներկա մոմենտին գոմերի կառուցման այս կամ այն չափերը չի կարելի վորոշ շրջաններում սահմանափակել և ամեն առանձին դեպքում այդ հարցը պետք է վճռվի հողային մար-

միններին կից հմուտ հանձնաժողովում, տեղական աշխատողների և շահագրգռված կազմակերպությունների մասնակցությամբ, վորոնք ներգրավված են արդյունաբերական խողաբուծության կազմակերպության գործում:


Մսի ստանալու համար բավող ջահերների մասին և կիսաճարպային բառում մի գլխին պահանջվում է վոշ ավել քան 1,00 քառ. մետր տարածություն, իսկ 10 և ավելի գլուխ վանդակում պահելու դեպքում այդ չափը կարելի լի փոքր լինի կրճատել մինչև 0,60—0,20 քառ. մետր ամեն մի գլխին:

Այստեղ մենք ընդհանուր հասկացողություն տվինք խողազոմերի ժամանակակից կառուցման հիմնական մոմենտների մասին, և ընթերցողի ուշադրությունը կենտրոնացրինք մասնավորապես այդ գործի միջոցին հանգամանքների վրա, վորպես իրազեկ լինելու նյութ:

Իսկ շատ մանրամասնությունները, վորոնք վերաբերում են շինարարական տեխնիկային և այն, ինչպես որինակ, պատերի, լուսամուտների, տաշտակների, ջրմուղու և կոյուղու անցկացնելը և այլն, այդ դեպքում մենք լինթադրում ենք, վոր այդ հարցերը պետք է վճռվի պլաններն ու նախագծերը մանրամասն կազմելու ժամանակ, և չեն վրիպի վերոհիշյալ հմուտ հանձնաժողովի աչքից, վորը հաստատելու լի պլանի այս կամ այն վարիանտը:


ՄԱՔՈՒՐ ՈՂՈՒՄ ԳՏՆՎԵԼԸ ՅԵՎ ՇԱՐԺՈՂՈՒԹՅՈՒՆԸ — ԿԵՆԴԱՆՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳԼԻԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆ Ե

Մաքուր ողում տարվա բոլոր լեղանակներին գտնվելը շատ մեծ նշանակություն ունի ցեղական և արդյունաբերական խողաբուծության զարգացման գործում: Կենդանին չպետք է փախենա վոշ ջրախից և վոշ էլ այլ պատահարներից: Գերմա-



Նկ. 9.
Շրջվող կերամաներ.


նացիք և դանիացիք այդ տեսակետից բաժանան առաջ են գնացել մյուս լեռերներէց, վարովեան նրանք խոզերին չեն նրբացնում, այլ ընդհակառակը խոզերին ամեն սր գուրս են



Նկ. 10.

նոռերի զրոսավայրի բաղ խոզադռնի կից.

Թողնում զրոսանքի: Սմառը նրանք անց են կացնում առատ արոտատեղերում, իսկ ձմեռը 2—3 փամ գուրս են հանում խոզագոմերին կից շինված հատուկ բակերը, նայած լեղանակին:




Նկ. 11.

նոռերի զրոսավայրի բաղ խոզադռնից հետո՝ առանձին բաժանմունքներով.

Մենք ել պետք է այդ տեսակ բակեր շինենք կոլեկտիվ խոզագոմերում, ընդվարում ծնող մերունի համար պետք է ը-

նել առանձին բակեր 2,00—5,00 մետր չափով, իսկ ցեղական խոճկորների համար ընդհանուր բակեր—հատկացնելով եզ խոզուկներին առանձին և վարագրիկներին առանձին բաժանմունքներ, ամեն մի գլխի համար՝ 3,00 ըստ մետրի չափով:

Վարպետի խողն ամառը կարողանա սգալել շոգից և փայտեղանակներից, բակի ներսում շինում են փոշ մեծ ծածկ, փո-



Նկ. 12.

Սմերիկական տեղափոխող անակ՝ զրոսավայրում.

որ պահպանվում է լեռեր կողմից, իսկ արոտատեղում և դաշտում դնում են ամերիկական ձևի շարժական տեսակներ:

ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՇԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Պարզ պատկերացնելու համար, թե ինչպես պետք է կերակրել կենդանուն և ինչպես պետք է խնամել նրան, կարկաժոր է համառոտակի ծանոթանալ թե ինչպես է անում կենդանին, ինչից են սնունդ ամուս և անում մկանները (միսը), ճարպը, վսակները և այլն:

Կենդանիները և բույսերն ընդհանրապես կազմված են այսպես կոչված որգանական նյութերից՝ սպիտակուցներից, ճարպերից և ածխաջրաներից և անորգանական նյութերից՝ հանքային աղերից (մոխրից) և ջրից:

Սպիտակուցն առատ է ձվի, կաթի և բոլոր կենդանիների մսի մեջ: Բույսերից սպիտակուցով հարուստ են սիսեռը, փուլը, աւվուլսը, լեռեճնուկը, կորնզանը, հացահատիկները:

Սվեյի շատ սպիտակուց կա քուսպի (կոպտոնի) մեջ: Ած-
խաջրատը՝ դա շաքորը, ուլան ե: Ածխաջրատով հարուստ ե
կարտոֆիլը, նրանում շատ ուլա կա, իսկ սպիտակուց համա-
բյա չկա: Լացանատիկների մեջ ևս շատ ուլա կա, սակայն սպի-
տակուցն ել քիչ չե, քուսպի մեջ ել շատ սպիտակուց և ածխա-
ջրատ կա:

Ճարպը՝ դա կենդանիների ճարպն ե, կովերի և բուսական
ուղերն են: Միջանն բույսերի սերմերի մեջ շատ առատ ե
լուղը, ինչպես, որինակ՝ արևածաղկի, կտավատի, կանեփի,
քնշուփի և բամբակի:

Մոխիրն, ամեն մեկը գիտի, վոր կաղմված ե գանազան հան-
քային աղերից, կրից, նատրիումից, ֆոսֆորից, կամ նրանց
ալլ հանքային միավորումներից: Մոխրի նշանակութունը հակա-
յական ե, վորոպեսե մոխրային մասերից ե կազմվում կենդանու
կմախքը և այդ մասերը հարկավոր են կենդանու աճման ժամանակ:

Սպիտակուցային կերը դնում ե միս (մկաններ) կազմելու
վրա: Վերջինն ավելանում ե գլխավորապես կենդանու շահել
հասակում աճելու ժամանակ: Իրենց աճեցողութունը վերջաց-
րած հասակավոր կենդանիների միսն այլևս չի աճում, ուստի
և մտային բուսմը կատարվում ե կենդանու հենց շահել հասա-
կում: Բանու ժամանակ ածխաջրատից և ճարպերից կենդա-
նու ճարմնի մեջ կազմվում ե միայն ճարպ:

Ճարպը լավ ե գոյանում այն կենդանիների մեջ, վորոնք
վերջացել են իրենց աճեցողութունը, ընդվորում կենդանու
կատարյալ հանգիստը նպաստում ե կերից ճարպ ստանալուն:

Կենդանու աճման և մսի ավելանալու համար սպիտակու-
ցի, ածխաջրատի, ճարպի և հանքային աղերի հետ միատեղ
հարկավոր են այլև հատուկ նյութեր, վորոնք կոչվում են վի-
տամիններ: Այս բանը ծաղում ե յատիներեն վիտա բառից,
վոր թարգմանաբար նշանակում ե կյանք:

Իուրս ե գալիս, վոր առանց վիտամինների, այսինքն՝ կլանք
ափող նյութերի, մինչև իսկ սպիտակուցների ճարպերի, ածխա-
ջրատների և հանքային աղերի առկայութամբ, վոր մի կենդա-
նի չի կարող կանոնավոր աճել, լավ գարգանալ և ընդհանրա-
պես ապրել:

Այդ վիտամիններից շատ կան կանաչ խոտերի մեջ, հա-
կապես առվուլտի, չերեքնուկի և վիկի, բանջարեղենի, ճակըն-
դեղի, գազարի և գդուժի մեջ:

Այդ կերերի վիտամինները կրում են աճեցողության վի-
տամիններ անունը: Յեթե կերի մեջ չկան աճեցողության վի-
տամիններ, այդ դեպքում շահել կենդանին զարարում ե աճե-
լուց, թուլանում ե, տխրում, աչքերն հաճախ ճարտատում են,
կենդանին խուսափում ե յուլսից: Այդ տեսակ խոճկորները
խիստ կերպով տարբերվում են նորմալ կերպով զարգացողներից:

Գլխութունը դառել ե նույնպես հակառակիտային կամ
կանոնավոր գոսկրացման վիտամին: Այդ տեսակ վիտամինի
բացակայութունն ուժեղ կերպով իրեն զգալ ե ապրիս խոզա-
բուծական դործում: Այդ հիվանդութունն արտահայտվում ե
ոստիտով, այսինքն՝ վոսկրները դադարում են աճելուց և
փափկում են:

Չահել հասակում ոստիտով հիվանդ խոճկորներն ուշա-
թափվում են, վորից և հաճախ մահանում են:

Աճեցողության վիտամինը և հակառակիտային կամ վոս-
կրացման վիտամինը սովորաբար գտնվում ե մոդ կաթի մեջ,
վորը հիլության ժամանակ և կաթ տալու շրջանում սեփում ե
վիտամիններով հարուստ կերով և հաճախ լինում ե արևի
տակ:

Սոդաբուծության համար անհրաժեշտ վիտամինները (վո-
րոնք նպաստում են աճեցողության և վոսկրանալուն) քիչ են
հացահատիկների մեջ (տարեկանի, գարու, վարսակի) և կար-
տոֆիլի մեջ:

ՅԵՂԱԿԱՆ ԽՈՉԵՐԻ ՇԱՍԱՐ ԿԵՐԱԲԱԺԻՆ ԿԱՉՄԵԼԸ

Վարդես նորմաներ կազմելու ամենահասկանալի և հասա-
րակ միջոց անհրաժեշտ ենք համարում առաջարկել սկանդի-
նավյան (գանիական) լեզանակը: Այդ նորմաները կազմում են
ըստ կենդանի քաշի և բոլոր կերերը հաշվում են հատիկային
կերի հաշվով, վորը հետո վերածում են այս կամ այն կերի
միավորների՝ կիլոգրամներով:

Հայաստանում ամեն մի կերի միավոր ընդունված է, ըստ էր օննդարարության, մեկ կիլոգրամ գարու հավասար: Որինակ՝ յեթե ասում են, թե խոզին պետք է կեր տալ, վոր իր սննդաբարությամբ հավասար լինի 4 կիլոգրամ գարուն, դա չի նշանակում, թե պետք է տալ բացառապես 4 կիլոգ. գարի, այլ պետք է մի մասը փոխարինել այնպիսի կերով, վորը հավասարվի նրան իր սննդաբարությամբ՝ համաձայն կերի միավորների աղյուսակի:

Յեթե գարի չլինի, այդ դեպքում կարելի չէ, ասանք, փոխարինել յեզիպատացորենով, վարսակով, ցորենով և այլն:

Տվյալ դեպքում 4 կլգ. գարին փոխարինում ենք 3 կլգ. յեզիպատացորենով և 8 կլգ. յերեսը քաշած կաթով (3 կլգ. յեզիպատացորենը = 3 կերի միավորի և 8 կլգ. յերեսը քաշած կաթը = 1 կերի միավորի):

Ա. Ջահել, աճող խոզերին տրվում է կեր հետևյալ հաշվով կերի միավոր կիլոգրամներով:

1. Խոճկորներին, մոր ծծի կաթից կորելուց մինչև 40 կլգ. կենդանի քաշի հասնելը, պետք է տալ կենդանի քաշի $\frac{1}{20}$ մասը, այսինքն՝ $40:20=2$ կերի միավոր կիլոգրամներով:

2. 40 մինչև 80 կլգ. կշռող խոճկորներին պետք է տալ առաջին 40 կլգ. կենդանի քաշին 2 կերի միավոր կիլոգրամներով և վերջինին ավելացնել 40 կլգ. քաշը գերազանցող $\frac{1}{20}$ մասը: Որինակ՝ յեթե խոճկորը քաշում է 60 կլգ., տրվում է 2 կերի միավոր կլգ. օվ, զուժարած 20 կլգ. -ի $\frac{1}{20}$ մասը՝ քաշի ասարբարությունից, այսինքն՝ $20:40=\frac{1}{2}$, իսկ ամբողջը $2\frac{1}{2}$ կերի միավոր կիլոգրամներով:

Ուրիշ որինակ. յեթե կենդանի քաշը 80 կլգ. է, այդ դեպքում տրվում է 2 կերի միավոր կլգ., զուժարած 40 կլգ. քաշի $\frac{1}{20}$ ասարբարությունը, այսինքն՝ 1 կերի միավոր (40:40), իսկ ամբողջը $2+1=3$ կերի միավոր կիլոգրամներով:

3. 80 մինչև 120 կլգ. քաշունեցող խոճկորներին պետք է տալ առաջին 80 կլգ. կենդանի քաշին 3 կերի միավոր կիլոգրամ. և դրան ավելացրած 80 կիլոգրամ քաշի գերազանցող $\frac{1}{20}$ մասը:

Որինակ՝ յեթե խոճկորը քաշում է 100 կլգ., այդ դեպքում տրվում է 3 կերի միավոր կլգրամ. (80 կիլգ. կենդանի քաշին) ավելացրած 20 կլգ. ասարբարության $\frac{1}{80}$ մասը, այսինքն՝ $\frac{20}{80}=\frac{1}{4}=\frac{1}{2}$, իսկ ամբողջը $=3\frac{1}{2}$ կերի միավոր կլգ.:

Յեթե խոճկորը կշռում է 120 կլգ., այդ դեպքում 80 կլգ. քաշին տրվում է 3 կերի միավոր, իսկ մնացած 40 կլգ. քաշին տրվում է $\frac{1}{80}$ մասը, այսինքն՝ $\frac{40}{80}=\frac{1}{2}$ կերի միավոր, իսկ ամբողջը միասին $3+\frac{1}{2}=3\frac{1}{2}$ կերի միավոր կիլոգրամ:

4. 120 մինչև 160 կլգ. կենդանի քաշ ունեցող խոճկորներին պետք է տալ կենդանի քաշի առաջին 120 կլգ. $3\frac{1}{2}$ կերի միավոր և դրան ավելացնել 120 կլգ. -ից վեր կենդանի քաշի ասարբարության $\frac{1}{120}$ մասը:

Որինակ՝ յեթե խոճկորը քաշում է 140 կլգ., այդ դեպքում տրվում է $3\frac{1}{2}$ կերի միավոր կլգ., ավելացրած 20 կլգ. քաշի ասարբարության $\frac{1}{120}$ մասը, այսինքն՝ $\frac{20}{120}=\frac{1}{6}$, իսկ ամբողջը $3\frac{1}{2}+\frac{1}{6}=3\frac{2}{3}$ կերի միավոր կլգ.:

Յեթե խոճկորներին կենդանի քաշը 160 կլգ. է, այդ դեպքում տրվում է $3\frac{1}{2}$ կերի միավոր կլգ., ավելացրած 40 կլգ. քաշի ասարբարության $\frac{1}{120}$ մասը, այսինքն՝ $\frac{40}{120}=\frac{1}{3}$, իսկ ընդհանուրը $3\frac{1}{2}+\frac{1}{3}=3\frac{5}{6}$ կերի միավոր կլգ.:

Բ. Իրենց անեցողությունը վերջացրած ջանել կենդանիներին սրվելիք կերը:

1. Մահերջ մեռուներին տրվում է կենդանի քաշի $\frac{1}{100}$ մասը:

Որինակ, յեթե կենդանի քաշը 200 կլգ. է, տրվում է $200:100=2$ կերի միավոր կլգ.:

2. Հղի մեռուներին նույն չափով, հղիության լերկրորդ շրջանում, ավելացրած $\frac{3}{4}$ կերի միավոր կլգ.:

3. Ծծմայր մեռուներին տրվում է կենդանի քաշի $\frac{3}{100}$ մասը՝ մոտ 160—200 կլգ. քաշ ունենալու դեպքում:

Յեթե մայրը 160 կլգ. -ից քիչ է քաշում, $\frac{3}{100}$ մասից մի քիչ ավել են տալիս. որինակ՝ խոզը 150 կլգ. է քաշում. 150 կլգ. կենդանի քաշի $\frac{3}{100}$ է կազմում է 4,5 կերի միավ. կլգ.,

խսկ վորովհետև 150 բիչ և 160-ից, ուստի գրա վրա ավելաց-
վում է մոտավորապես 0.5 կերի միավոր կլգ., ամբողջը
4,5 + 0,5 կերի միավոր կլգ.:

Ընդհանրապես, յերբ մերումը 200 կլգ. ավելի չե քաշում,
կեր առլիս են քաշի $\frac{3}{100}$ մասից պակաս, որինակ, կենդանի
քաշի 300 կլգ., վորի $\frac{3}{100}$ կլգ. = $\frac{900}{100} = 9$ կերի միավ. կլգ., իսկ

վորովհետև 300-ը 200-ից շատ է, ուստի 9 կերի միավորից պա-
կասեցնում են մոտավորապես 2-ից մինչև 2,5 կերի միավ.,
այսինքն՝ 9—2 կամ 2,5=7 կամ 6,5 կերի միավ. կլգ.:

4. Բեղձավորող վարագներին 160—200 կլգ. կենդանի
քաշի դեպքում առլիս են կենդանի քաշի $\frac{2}{100}$ մասը:

Գահիս քաշ ունեցող վարագին տրվում է $\frac{2}{100}$ մասից
ավելի, իսկ ավելի քաշ ունեցողին առլիս են $\frac{2}{100}$ մասից պա-
կաս: Վոչ բեղձնավորման շրջանում առլիս են կենդանի քաշի
 $\frac{1}{100}$ մասը, ավելացրած 1 կերի միավոր կլգ.:

Որինակ՝ 320 կլգ. կշռող վարագը վոչ բեղձնավորման
շրջանում ստանում է $\frac{1}{100}$ մ. = 3,2 կերի միավոր կլգ. + 1 կերի
միավ. = 4,2 կերի միավոր կենսապահ կեր:

Որբաբաժինը պետք է կազմել տնտեսության մեջ գտնված
զանազան կերերի խառնուրդներից, և այնպիսիներից, վորոնք
կարող են ավելի եժան գնված լինել շուկայում. որինակ՝
քուսպ, թեփ, թափթփուկներ և զանազան մթերքների մնա-
ցորդներ, վորոնք մեծ քանակությամբ ստացվում են ձիթահան,
չրազացների, կաթնալին մթերքների արդյունաբերություննե-
րում և ճաշարանի մնացորդներից:

Ամառը ալմատապառուղներ չկան, բայց նրանց կարելի չե
փոխարինել արոտատեղերով, այնպես, վոր խողերն արոտա-
տեղերում բավարար կերպով պահելու դեպքում նրանց կերա-
կըրում են անհրաժեշտ կերի կիտով միայն:

Վերևում ցույց տված կերի հարաբերությունը միմյանց
նկատմամբ պետք է վերցնել վոչ թե ըստ քաշի, ալ ըստ նրանց
մանդարարության, վորն, ինչպես վերևում ասացինք, վորոշվում
է կերի միավորներով. Ուստի մեկ կերը մյուսի հետ պետք է

համեմատել ըստ նրանց մանդարարության:

Բոլոր կերերի համեմատական միավոր կամ կերի միավոր
20Յ2-ում համարվում է 1 կլգ. գարին:

Մեկ կերի միավոր կամ մեկ կլգ. գարուն ընկնում է ըստ
մանդարարության—

1. Արեածաղկի քուսպ	0,9	կլգ.
2. Կտավախի	0,9	»
3. Գարու	1,0	»
4. Վարսակ	1,2	»
5. Յեղիպատացորեն	0,95	»
6. Միսեռ	1,0	»
7. Վիկ	1,0	»
8. Յորենի թեփ	1,2	»
9. Տարեկանի »	1,2	»
10. Գարու	1,2	»
11. Գարու ալյուր	0,95	»
12. Մսի ալյուր	0,60	»
13. Մսա-վոսկրային ալյուր	1,0	»
14. Արյան ալյուր	0,70	»
15. Խոզակաղին, կիտաչր	0,85	»
16. Մարգագետնի խտի մեջ	2,5	»
17. Տրոֆեյեվկա	2,5	»
18. Յերեքնուկի խտ	2,2	»
19. Առվույտի խտ ծաղկած	2,58	»
20. » » չծաղկած	2,20	»
21. Իշառվույտ ծաղկած	2,25	»
22. Առվույտ արտի	8,0	»
23. Վիկի	9,0	»
24. Յերեքնուկի	7,0	»
25. Կերի ճակնդեղ	9,10	»
26. Գազար	9,0	»
27. Շաքարի ճակնդեղ	4,20	»
28. Կարտոֆիլ	4,20	»
29. Յեղիպատացորենի սիլոս	8,0	»

30. Սիւլս	10,0	կլէ
31. Կերի ճովնդեղի տերեւեր	15,0	»
32. Եաջարի »	12,0	»
33. Յերեսը քաշած կաթ	6,0	»
34. Թանի մաշորպներ	10,0	»
35. Երճուկ	12,0	»

ՉԱՆԱՉԱՆ ԿԵՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Խոզերը մեծացնելու և բուելու ժամանակ տարբեր կերերից առանձնապէս մեծ նշանակութիւն ունեն կաթնատանտ-տութիւն մաշորպները՝ յերեսը քաշած կաթը, թանը և շիճուկը Բազրը և թթու յերեսը քաշած կաթը, նուշնպես և թանը— խոզերի համար հրաշալի կեր են: Յեզ վարովնեռն ամենից լավ խոճկորեններն են իրենց կերն արգարացնում ավելի ջանել հասա-կում, ուստի վերոնիշյալ կերը պետք է ամենից առաջ տալ մինչև հինգ ամսական հասակը: Երճուկը նուշնպես խոզերը լավ ոգտադործում են ավելի մեծ հասակում: Երճուկը տալիս են խոզերին նամանավանդ մասցուններ բուելու ժամանակ, հացա-հատիկով խառնած:

Խոզերին կերակրելիս հացահատիկի կերերից առաջին տեղը պետք է տալ գարուն, վորպես շատ ավելի սննդարար կեր, վորից միսն ու ճարպը ավելի համեղ են դառնում:

Գարին լավ հացահատիկային կեր է նուշնպես ջանել խոճ-կորենների և խոզուկների համար:

Գարին պետք է տալ ձեռած գրութիւմով:

Խոզերի համար հրաշալի կեր է նաև տարեկանը:

Ցարեկանով կերակրելու դեպքում ստացվում է ավելի բարձր հատկութիւն ճարպ:

Միսեռն ու վոսպը տալիս են լավ ճարպ և լավ են ազդում խոճկորենների աճելու վրա, ուստի ցանկալի լին դրանցից տալ ջանել, աճող խոզերին:

Քուսպերը հանդիսանում են շատ սննդարար կերեր: Նրանցում շատ ուղիտակուց կա, վորն առանձնապէս կա-

բնոր նշանակութիւն ունի ջանելներին մեծացնելու և ծծմալը-րի համար:

Ենորիվ քուսպերի (կտալտոսի և արեածաղկի) մեջ պա-նակիզող մեծ բանակով ճարպի (լուղ), պետք է քուսպի որա-բաժինը ստանանտիակել, առանձնապէս ճարպի համար բանկիս, վորի հետեանքով ստացվում է արնալիսի մթերք, վորը տալիս է փափուկ ճարպ և միս:

Արտաստանմանում մեր քուսպը յուղաթափ են անում, և այդպիսի քուսպով կերակրելը հրաշալի հետեաքներ է տալիս: Քուսպը տալիս են ամխաշրատ պարունակող կերի հետ, ոչի-նակ՝ կարտոֆիլի, դդումի, ճակնդեղի և այլն:

Յագիպտացորենը տալիս է ամենից ավելի բարձր քաշ, վորը տալիս են բուելու ժամանակ: Բայց նրանից ստացված ճարպն առաջնակարգ չէ, փափուկ է: Ամերիկայում, վորտեղ խոզերին կերակրում են մեծ մասամբ յեզիպտացորենով, այդ յերևուլթն առանձնապէս աչքի լին ընկնում:

Յագիպտացորենի հսկայական ցանքները Ամերիկայում բա-ցառապէս մշակում են յեզիպտացորենից միս և ճարպ վերա-մշակելու համար:

Բացառուպէս միտին յեզիպտացորենով կերակրել չի կա-րելի, անհրաժեշտ է խոզին կերակրել նաև այլ կերերով:

Վիտամինների պակասութիւն հետեանքով, յեզիպտացորե-նով հղի և ծծմալը խոզերին և ջանելներին կերակրելիս ըստ հնարավորութիւն ավելի լավ է կերարածնին խառնել մեծ քա-նակութիւմը կանաչ կամ չոր առվուլտ:

Խոզակաղինը խոզերի համար պետք է համարել լավ կեր, հատկապէս հասունացած խոզերից ճարպ ստանալու համար՝ բանլու դեպքում: Չոր խոզակաղինի մանրուկները (առանց կճեպի) իր սննդարարութիւմը կարելի լին հովասարեցնել տարեկանին, իսկ կճեպով թարմ խոզակաղինը կարող է իր սննդարարութիւմը՝ փոխարինել հովասար քանակով քաշ ունեցող թեփերին— կի-լոգրամը-կիլոգրամին:

Մինպետ վոր, վորտեղ կան կաղնու անտաններ, խոզա-բույծ-կուլանտեսականի համար ձեռնառն լին աշխանը խոզակա-

զին հավաքել և պաշարել 2-3 տարվա համար, վարովհետև խոզակաղնի բերքը լինում է վոչ թե ամեն տարի, այլ 2-3 տարին մեկ անգամ:

Բացառապես խոզակաղնով կերակրելու դեպքում ստացվում է անհամ միս, վոչ բնական դուրսով, իսկ աղիքները բուրբոլին կապտում են, սևափի և անարժեք են դառնում:

Ճակնդեղն ու կարտոֆիլը հրաշալի կերպով ոգտագործում են խոզերը: Կավ բավում են հասունացած խոզերը կարտոֆիլով, վերջինիս պիտի ավելացնել նաև հացահատիկ և ջուսպ:

Կոլտեստականները խոզերի աճեցողութան և ընդհանրապես կերակրելու դեպքում պետք է հատուկ ուշադրություն դարձնեն առվույտի, կորնզանի և իշառվույտի վրա, վորոնք վաղուց մեծ դեր են խաղում ամերիկական և գաղթական արևմտաթյուններում:

Կանաչ առվույտը, յերեքնուկը և իշառվույտը մեծ ախորժակով ուտում են ամեն հասակի խոզերը: Դրանք լավ են նաև ձմանը՝ վորպես խոտ: Վերջինս խոզերին տալիս են ձանրած և խաշած վիճակում:

Բացի զրանից, առվույտը, յերեքնուկը և իշառվույտը խոզերի համար հանդիսանում են սննդաբար կեր: Դրանք, ինչպես վերևում ասվեց, իրենց մեջ պարունակում են շահել խոզի աճեցողութան և առողջութան համար շատ անհրաժեշտ և կարևոր վիտամիններ: Հենց միայն դրա համար առվույտը, յերեքնուկը և իշառվույտը խոզաբուծութան համար հանդիսանում են անփոխարինելի կեր: Վորտեղ խոզ կա, այնտեղ պետք է լինի առվույտ, յերեքնուկ և իշառվույտ: Առանց դրանց սնննար է պատկերացնել ճիշտ կերպով դրված խոզաբուծութունը: Անցնելով կուլտուրական խոզաբուծութան, միաժամանակ պետք է անցնել առվույտ, յերեքնուկ և իշառվույտ ցանկուն:

Առաջներում բոլորովին անհասկանալի մի շարք հիվանդությունները, խոճկորների աճեցողութան ղանդաղեցումը բոլորովին վերացվում են — առվույտը՝ խոզերի կերերի մեջ մտցնելուց հետո:

Վրաների անդամալուծությունը, վատ ախորժակը, դրանց

հետևանքով վատ աճեցողությունը, այս բոլորն արագութամբ անցնում են առվույտով և յերեքնուկով իր ժամանակին կերակրելիս:

Սիլոս.— Սիլոսի, վորպես կանաչ և հյութալի կերի նշանակութան մասին յերկար խոսել պետք չէ, վորովհետև կոլտեստութունները և խորհանտեսութունները բավականաչափ արդեն ծանոթ են կերի այդ տեսակին. սակայն այստեղ պետք է նկատել, վոր ավելի ժամանակում խոզերին սիլոսով կերակրելը մտնում է խոզաբուծական տեսնութունների պրակտիկայի մեջ, վորպես եժան, հյութալի և ոգտակար կեր, ինչպես շահելների աճեցողութան, նույնպես և մսի համար բույու դեպքում:

Սիլոսով կարելի է կերակրել սկսած 4 ամսական հասակից, անցնելով կերակրմանն աստիճանաբար, դրան անսովոր կենդանու մարտողությունը չբարձրալելու համար:

Որ ու գիշերվա ընթացքում տված որբաժնի 25% -ը կարելի է վորտարինել սիլոսով, հատկապես կանաչ յեղիպտացորենից, արևածաղից և բակայաբույսերից պատրաստած կերով, բայց 1¹/₂—2 կլգ. վոչ ավելի՝ որ ու գիշերվա ընթացքում:

Ուրբաժնի տալիս պետք է սկսել 200 գրամից և ավելացնել 6—7 որվա ընթացքում մին և կերի սահմանված չափը: Բույու վելջին ամսում սիլոսով կերակրելը պետք է դադարեցնել:

Չահել խոզին սիլոսի հետ միասին պետք է տալ անպայման 10—20 գրամ կավիճ:

ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՅԵՎ ԿԵՐ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խոզերին անհրաժեշտ է կերակրել խիստ վորոշված ժամանակին: Երանք շատ արագ ընտանում են այդ տեսակ կերակրելուն և խիստ կերպով ազդվում են կերակրման ժամանակի ամեն տեսակ անճշտութան և փոփոխութան դեպքում:

Հասակավոր խոզերին — մերուններին և վորագներին Եարկավոր է կերակրել ուբական 2 անգամից վոչ պակաս, ծիծ

տվող մերուհներին՝ որական 3 անգամ: Խոճկորներին և խոզուկներին անհրաժեշտ է կերակրել որական 4 անգամից վոչ պակաս:

Կերակրելու ժամանակը պետք է սահմանել այնպես, վորպեսզի նրանց միջև լինի լիարժեք ընդմիջումները միաշափ լինեն: Խտացրած կերը տրվում է կամ չոր կամ թանձր խմորի վիճակում, բայց վոչ մի դեպքում՝ հեղուկ, շփոթ վիճակում:

Կերաբաժինը տալուց հետո խոզերին պետք է ջրել յերկու ժամից հետո:

Խտացրած կերի հետ սովորաբար տրվում է կանաչ կեր և արմատապտուղներ:

Բոլոր կերերը պետք է տալ թաց վիճակում, վորովհետև կերերի յեփելը նվազեցնում է նրանց սննդաբարութունը: Բացառութուն է կազմում միայն կարտոֆիլը, վորի յեփելը անհրաժեշտ է նրա մեջ գտնված թունավոր նյութերը չեզոքացնելու համար:

Այն շուրջը, վորի մեջ յեփում են կարտոֆիլը, վորպես թունավոր նյութեր պարունակող, վոչ մի դեպքում չպետք է տալ խոզերին:

Պետք է յեփել կամ տնական կելպով յեռացել ($1-1\frac{1}{2}$ ժամ) այն կերը, վորն արդեն սկսել է փշանալ (բորբոսնած, յերկար մնացած, կուտացած և այլն):

Այդ արվում է նրա համար, վորովհետև տնական յեռացնելը, սպանելով բորբոսները և մանրէները մի մասը, բավականին թուլացնում է նրա փասսակար նելզործութունը կենդանիների վրա: Այդ տեսակ կերը տրվում է խտացրած կերի որական կերաբաժինի $\frac{1}{3}$ չափով: Ծծմալը, նույնպես և հղի խոզերին, այդ տեսակ կեր չպետք է տալ: Խոզերի համար նախատեսված կերը չպետք է նախապես պատրաստել, այսինքն՝ մինչև խոզերին բաժանելը, այլ պետք է կերը պատրաստել տալ այն բաժանելուց անմիջապես առաջ:

Բացառութուն է կազմում միայն կարտոֆիլի յեփելը, վորը սովորաբար կատարվում է որական կերաբաժինի չափով: Միայն անհրաժեշտ է այն յեփելուց հետո ջուրը թափել և

յեփած կարտոֆիլը ժամերով չթողնել ջրի մեջ:

Հացահատիկի կամ ալյուրի կերի խառնուրդը պետք է կազմել նախապես դեկադներով:

Կերի որաբաժինը պետք է կազմել գանազան կերերից, այսինքն՝ որաբաժնի մեջ, վորպես անհրաժեշտ պայման, պետք է մտցնել արմատա-գնդապտուղներ, կանաչ կեր (ամառը), սիրոս (ձմռանը), խտացրած կեր, կոպիտ կեր և հանքային աղեր:

Կանաչ և հյութալի կերը պետք է մտնի որաբաժնի մեջ $30-50\%$ -ի չափով, կերի միավորներով, կոպիտ կեր—առվույտի, յերեքնուկի խոտ և այլն 5% վոչ պակաս և 10% վոչ ավելի կերի միավորներով:

Խտացրած կերը տրվում է խառնուրդի ձևով 2-ից վոչ պակաս և 4-ից վոչ ավելի կերի միավոր, նայած հասակին և տնտեսութան ուղղութան (ցեղական, արդյունաբերական): Ախորժակ պահելու համար այդ խառնուրդների կազմը պետք է ամեն մի 2—3 դեկադից հետո փոխել, այսինքն՝ մեկ կամ յերկու կերը փոխարինել ուրիշներով, և այդպես շարունակ:

Սալերի կերը ծիծ տալու և հղիութան շրջանում պետք է ապահովված լինի բավարար քանակի կրով, ուստի ամառը առվույտի կամ յերեքնուկի արտատեղում արածացնելը, իսկ ձմռանն այս խտանուրդ կերակրելը, վորպես մեծ քանակով կիր պարունակողների, պարտադիր է:

Կերակրելուց հետո անցած չկերված ամբողջ կերն անմիջապես հավաքում են և այլևս դրանով հետագայում չեն կերակրում:

Խոզերի կերակրելու վրա հսկող անձնակազմը պետք է հետևի նրանց ախորժակին և բոլոր կենդանիների լրիվ կամ մասնակի կորցրած ախորժակի մասին անմիջապես հայտնի դոտեխնիկին կամ անասնաբուժին:

Տնտեսութուններում (խորհանտեսութուն, կուտնտեսութուն) անասնաբուժ անձնակազմ չլինելու դեպքում, անհրաժեշտ է այդ տեսակ խոզերի տառութունը (նորմալ տառութունը 40° Ցելս.) չափել և վերջինիս բարձր լինելու դեպքում,

մինչև բժշկի գալը, կասկածելի խոզերին առանձնացնել:

Ինչպես ծրծ տվող, նույնպես և հղի մերուններին ու ջահելներին անհրաժեշտ է տալ կերակրի աղ, հասակավորներին մինչև 15—20 գրամ, ջահելներին 10—15 գրամ որվա ընթացքում:

Սառած վիճակում հյութալի կերը չպետք է տալ հղի մարերին, վիժումներից խուսափելու համար: Այդ տեսակի կերերը նախապես պետք է հալեցնել, վերը չպիտի գերազանցի մեկ անգամ արվելիք քանակից:


Ամեն անգամ կերակրելուց հետո մսուրները, տաշտերը պետք է լվանալ, և շարժվել մեկ անգամ դրանց պետք է քսել կրաջուր և արեին կամ քամուն տալ:

Կերակրելուց հետո խոզերին պետք է 2 ժամից վոչ պակաս հանգիստ տալ և արդ ժամանակ խոզագոմում վոչ մի աշխատանք չպիտի կատարել: Կողմնակի մարդկանց մուտքը խոզարուն ընդհանրապես, մանավանդ հանգստի ժամանակ՝ անթույլատրելի է:

Քե մերուններին և թե խոճկորներին պետք է մաքուր պահել, ամառն ամբար մեկ անգամ պիտի լվանալ ոճառով և խոզանակով, իսկ ձմեռը մաքրել խոզանակով և ծղոտի փնջերով: Հոսող ջուր լեղած տեղում ամառը խոզերին հնարավորություն պետք է տալ հաճախ լողանալու:

Խոզագոմներում տաքության աստիճանը խիստ լեյկեջներ չպետք է ունենա և ձմռանը 5° Ցելսիուսից ցած չլինի և 12° Ցելսիուսից ավելի չբարձրանա:

Խոզագոմերից գոմաղբը պետք է մաքրել որական 2 անգամ:



Նկ. 13.

Խոզերի բորվելու հարմարություն (գերան).

ԽՈՉԵՐԻՆ ԱՐՈՏԱՏԵՂՈՒՄ ՊԱՇԵԼԸ

Խոզերին արոտատեղերում պահելու վրա բացառիկ ուշադրություն պիտի դարձնել, առանձնապես կուլտուրական խոզարուծության անցնելու դեպքում:

Պետք է լավ հիշել, վոր առանց արոտատեղի չի կարող լինել վնչ արդյունաբերական, վնչ էլ ցեղական խոզարուծություն:

Արոտատեղն ամրացնում է մատաղ որզանիզժը, փոքրերին հնարավորություն է տալիս ազատ շարժումներ անելով, աճբացնել մկանները: Մրեգակի ազդեցությունը և ազատ շարժումները նպաստում են լավագույն կերպով ոգտագործելու կերը, ջահելներն արագորեն աճում են:

Արոտատեղը հնարավորություն է տալիս հացահատիկալին կերը 20 ից մինչև 50% անտեսել:

Արոտատեղը նպաստում է մերունների սեռական գործողությունների կանոնավորմանը, խիստ կերպով նվազում է ստերջ միաու տուկարը, պակասում է մահացած խոճկորների ծնունդը: Արոտատեղը պահպանում է վարագնելի սեռական գործունեությունը լերկար ժամանակ և նրանց ավելի լեռանգուն է դարձնում:


Արոտատեղը բավական կրճատում է խոզերի պահպանման վրա արած ծախսերը և եժանացնում է արտադրանքի— խոզի մսի ինքնարժեքը:

Արոտատեղում ծնված խոճկորներն ավելի խոշոր, ամրակազմ և դիմացկուն են լինում:

Արոտատեղում պահելը պահանջում է խոզարուծական կուլտանեսություններում և խորհրդալին տնտեսություններում կազմակերպել հատուկ արոտավայրեր և դրանց չզբաղեցնել ախպիսի կուլտուրաներով, վոր կուլանեսություն և խորհարնտեսություն խոզերի ամբողջ հոտը կարողանա լրիվ նրանց օգտագործել գարնանը, ամռանը և աշնանը:

Բարձր ստերջ, հղի և ջահել և նույնիսկ ծիծ տվող մերուններին ծննդաբերությունից 4 շաբաթ հետո անհրաժեշտ է

արոտատեղում պահել մինչև խոր աշուն: Նրանց համար այդ տեղ փայտե կամ հյուսված և հարդով ու կափով ծածկված թեթև շենքեր պիտի շինել, վորտեղ նրանք կպաշտպանվեն խիստ շոգից, վատ յեղանակից և ալլն:



Նկ. 14.

Խոզերն արոտավայրում.

Արոտատեղերն ավելի ճիշտ և նպատակահարմար կերպով ոգտագործելու համար պետք է բաժանել մասերի և այդտեղ արածացնելը պետք է կատարվի կանաչի աճման հնարավորության սահմաններում: Խոտաբույսերի յերկրորդ ցանքսը պետք է կատարել գարնան առաջին արոտացանքից 15—20 որ հետո, առնվազն ամառվա ընթացքում 2—3 անգամ: Դրանով էլ հասնում են խոզերին կանաչ խոտի վրա տեականորեն պահելուն:

Վորպեսզի խոզերը չփորեն գետինն ու արոտատեղերը չփչացնեն, անհրաժեշտ է նրանց կնճիթներին յերկաթալարից ող հագցնել: Արհեստական արոտատեղերի համար պետք է ոգտագործել հետևյալ կուլտուրաները՝ առվուլտ, յերեքնուկ, վիկ, վարսակ, սորգո, սուդանի խոտ, սոյա և ուրիշ խոտեր, ամեն մի առանձին դեպքում կուլտուրայի ընտրութունը համաձայնեցնելով շրջնողբաժնի հետ:

Ամենից շատ տարածված և ամենից արդյունավետ արոտատեղերը համարվում են առվուլտի և յերեքնուկի արոտավայրերը, դրանք ամենից շատ կանաչ խոտ են տալիս, ամեն հասակի խոզերն ախորժակով ուտում են և 1 հեկտարով 3—4 ամսվա

ընթացքում լիովին բավարարում են 40—60 խոճկորների կանաչ կերի պահանջը՝ առվուլտի արոտավայրերում, 30—40 խոճկորների պահանջը՝ յերեքնուկի արոտավայրերում: Այն ան-



Նկ. 15.

Բթածակերին ող հագցնելը.

տառային արոտատեղերը, վորոնց այժմ ոգտագործում են կուտնտեսականները, վորպես խոզերի արոտատեղ, հետագայում անմատչելի կլինի այդ նպատակի համար՝ արածացնելն արգելու հետևանքով, և կոլտնտեսություններին պետք կլինի անտառային բացատներում անցնել արհեստական արոտատեղեր կազմակերպելուն՝ վերոնիշյալ կուլտուրաներով:

ՑԵՂԱԿԱՆ ՎԱՐԱՋԻ ԽՆԱՄԵԼԸ, ՊԱՇԵԼՆ ՈՒ ԿԵՐԱԿՐԵԼԸ

1931 թվին Հայաստանի Հողօդկոմատը լենթադրում է ձեռք բերել մինչև 308 ցեղական անգլիական խոշոր սպիտակ տեսակի արտագրողներ՝ բեղմնավորման կայաններ բաց անելու և խոզաբուծական-արդյունաբերական կոլտնտեսություններին սպասարկելու համար:

Այս աշխատանքին հակառակ նշանակութուն է արվում, վորովհետև հենց առաջին տարիներում հնարավոր է տեղական խոզի վորակը բարելավել, մետիզացիայի (խառնուրդի) միջոցով:

Այդպիսով խառնուրդ ցեղի խոզերի արտագրությունը ՀՍՄՀ-ում պետք է խոշոր դեր կատարի խոզաբուծության վերակառուցման գործում:

Ապա ուրեմն մեր առաջ խնդիր է դրվում վոչ թե նախայային,

ալ մասյին և մաս-կիսաճարպային խողի ստեղծելը խոզաբուծութիան ապրանքայնութիւնն արագութեամբ բարձրացնելու և մաս-ճարպային կ'իզիսը թեթեւացնելու համար:

Այդ նկատառումներով մենք գտնում ենք, վոր ներմուծ-վող արժեքավոր կուլտուրական խոզը պետք է մեր տնտեսութիւններում գտնի համապատասխան խնամք, պաշտպանութիւն և կեր, և ամեն մի կոլտնտեսական կամ կոոպերատոր, ստանալով իր հոտի համար ցեղական վարագուեր, պետք է զին-ված լինի վարագուերը խնամելու, պահպանելու և կերակրելու համապատասխան գիտութեամբ:

Յերբեմն պատահում է, վոր կատարյալ հասակին չհասած վարագին հանձնում են բեղմնավորման կայանին, և փոխանակ նրան մինչև սեռական հասունութիւնը պահելու, վորպիսին արագ հասունացող ցեղերի համար հասնում է առաջին տար-վա վերջին, գլուղացիք նրան վաղաժամ թողնում են բեղմնա-վորելու:

Հետևանքն այն է լինում, վոր՝ 1) վարագը՝ դուստ ինքը չձևակերպված, չզարգացած մարմնով, լետ է մնում հետագա-յում աճելուց և իր արտաքին ձևավորումները հայտնաբերելուց, 2) նա վաղաժամ մաշվում, ուժասպառ է լինում, վորով և կը ճատվում է նրա ցեղական ընդունակութիւնը և 3) տալիս է վոչ ուժեղ սերունդ:



Նկ. 16.

Ցեղական վարագ անգլիական սպիտակ խոզը սերի.

Ուստի ուժեղ, աճած առողջ սերունդ ստանալու համար, վորն ընդունակ լինի հետագայում արագ և լավ բավելու, վոչ

մի դեպքում վարագներին 10—12 ամսականից շուտ չի կա-րելի թողնել բեղմնավորելու:

Այդ հասակում խոզը, սպիտակ անգլիական ցեղի լավ, ցեղական վարագները 140—160 կգ. կենդանի քաշից պակաս չպետք է ռենեսան: Այդ հասակում ամեն մի վարագին ծած-կելու համար 20—30 մերուններից ավելի չեն տալիս:

Յերկու տարեկան հասակում կարելի լի տալ 40—50 մե-րուն, 3-ամյա և բարձր հասակում՝ 50—60 մերուն՝ ձեռնաքաշ մեթոդով գոգավորման դեպքում:

Վարագների կանոնավոր ոգտադործման դեպքում պետք է բոլոր միջոցները ձեռք առնել նրանց սեռական գործունեյու-թիւնն ավելի լերկար ժամ անակով ազատելու համար, լավ հիշե-լով մի խիստ կարևոր հանգամանք, վոր «արտադրող վարագն իր խակական դեմքը ցուլց է տալիս 3—4 տարեկան հասակում, այսինքն՝ իր այդ հասակում է, վոր նա տալիս է ամենալավ սերունդը»:

Այդ հիմնական կանոնն առանձնապես պետք է կիրառել ցեղական գործում: Բոլորովին սխալ կարծիք է կազմվել գյու-ղերում, թե արտադրող վարագը պետք է լիկվիդացիայի յն-թարկել 3—4 տարեկան հասակում, համարելով նրան արդեն վորպես ծեր: Սովորաբար վարագի նորմալ ծառայութիւնը պետք է հաշվել 5—6 տարի, ավելի հազվադեպ՝ 7—8 տարի: Մինչև 7 տարեկան սովորաբար պահում են իր հատկութիւն-ներով արժեքավոր և աչքի ընկնող վարագներին:

Վարագներին պահելու շեքը պետք է լինի չոր, լուսավոր և տաք: Ամբողջ սարքավորումը և շրջապատող պիտույքները պետք է կառուցվեն ամուր նյութից, վորովհետև վարագն ու-ժեղ կենդանի լի, հեշտութեամբ շարժում է և կրծում միջնա-պատերը: Վերջինի վերացնելու համար պետք է միջնորմի կող-քերն ամրացնել լերկաթով և ընդհանրապես կերակրի և ջրի համար գործածվող ամբողջ ամանեղենը պատել լերկաթով, իսկ ավելի լավ է՝ շինել ցեմենտից:

Պահելու կարևոր պայմաններից մեկը հանդիսանում է մաք-րութիւն պահպանելը, ի բնի խոզը մաքրասեր կենդանի լի, և

խորապես սխալվում են նրանք, վորոնք ասում են, թե խողը կեղտ է սիրում, իսկ այստեղից ել առաջացել է ճկեղատոտ է, ինչպես խողը» ասացվածքը:

Յեթե կողք-կողքի շինենք լերկու փոս, մեկը ցեխոտ է մյուսը մաքուր ջրով լցված, այդ դեպքում խոզն իր սովորական լողանալու համար ընտրում է մաքուր ջրով փոսը:

Սակայն մեր պուղերում և տնտեսութուններում մաքուր փոսեր համարյա չկան, ուստի և իրեն ջրայնացնող միջատներից ազատվելու համար խոզն ստիպված է լինում մտնել ջրայի ցեխի մեջ, բնադդաբար զգալով, վոր դա փրկում է իրեն միջատներից, մաքրում է իրեն մաշկը: Այդ հիման վրա լել մենք խորհուրդ ենք տալիս կուտնաստութուններում և խորհատնաստութուններում խոշոր խողագոմեր կառուցելիս շինել հատուկ ավազաններ լողանալու համար:

Խողերի զբոսանքի մասին վերևում մենք ասացինք, վոր այդ պարտադիր է ճարպակալելուց խոստափելու համար:



Նկ. 17.

Խողերի լողանալու ավազան.

Բեղմնավորման համար վարազին բաց են թողնում որական մեկ անգամից վոչ ավելի, և վորպես բացառութուն՝ շաբաթը 7—9 անգամից վոչ ավելի: Վերջինս վերաբերում է 2 տարեկան և ավելի հասակավոր վարազներին:

Վարազների սեռական գործողութունները խնայելու և պաշտպանելու համար պետք է կերակրել լավ, աննդալից և

թեթև կերով: Խոսացրած կերերից լավ են համարվում վարաակը, գարին և թեփերն ու քիչ քանակով ջուսպերը. հյուսթալի կերերից՝ ճակնդեղը, գազարը, դդումը և սահմանափակ քանակութամբ — կարտոֆիլը (1 կլգ. վոչ ավելի), վորպես ճարպակալության նպաստող կեր: Ամառը կանաչ խոտ՝ առվույտ, լեբեքնուկ, վիկ և այլն:

Բեղմնավորման շրջանում կերաբաժնին պետք է խառնել որական 0,8—1,0 կլգ. վարսակ:

Վոչ մի դեպքում չի թուլլատրվում վարազներին և մերուններին միատեղ պահել (չայստանում հազվադեպ յերևույթ չէ), վորովհետև այդպիսի դեպքերում վարազները հալվում և արագութամբ մաշվում, թուլանում են: Վարազին չի կարելի պահել նաև մերուններին հարևան վաեղակում, մանավանդ զուգավորման շրջաններում:

Վարազները հալվում են և ոնանիզմով պարապում և կարճ ժամանակում անպետք են դառնում զուգավորման համար:

Նույնպես և չի կարելի միջանի վարազների պահել մեկ վանդակում, վորովհետև նրանք կռվում են և շատ հաճախ միմյանց ուժեղ վնասվածքներ հասցնում:

160 կլգ. կենդանի քաշ ունեցող վարազների համար որինակելի կերաբաժնի կարգը հետևյալն է.

1. Վարազը թեև կշռում է 160 կլգ., բայց նա հազիվ 11—12 ամսական հասակ ունի, նա պետք է դեռևս աճի, այնպես վոր նրան կարելի լել ոգտագործել ինչպես արտադրող, բայց տմենանվազ չափով, թուլլատրելով ծածկել տարեկան 20—30 մերունից վոչ ավելի:

ա) Յենթադրենք, վոր տնտեսության մեջ կան հետևյալ կերերը՝ գարի, թեփեր և կարտոֆիլ:

Այդպիսի վարազի կերաբաժինը պետք է կազմել այնպես, վոր նրա բաժնի 75% -ն ուժեղ կերեր լինեն: Վարազին իր կենդանի քաշի համաձայն տրվում է 3,2 կերի միավոր (կիրոգրամներով), բեղմնավորման շրջանում ավելացնում ենք 1 կերի միավոր (կիրոգրամ.), ընդամենը 4,2 կերի միավոր. — տըրվում է՝

գարի . . .	2,5 կլգ.	=	2,5 կերի միավ.
թեփեր . . .	1,2 »	1 »	»
կարտոֆիլ . . .	2,9 »	0,7 »	»
			<hr/>
	4,2 »		»

բ) Յեթե տնտեսութունն ունի հետևյալ կերերը՝ գարի, կարտոֆիլ և յերեքնուկի չոր խոտ,

տրվում է հետևյալ կերաբաժինը.

գարի	2,0 կլգ.	=	2,0 կ. միավոր.
յերեքնուկի խոտ	2,2 »	=	1,0 կ. մ.
կարտոֆիլ	5,0 »	=	1,3 կ. մ.
			<hr/>
	4,2 կ. մ.		

2. 160—200 կլգ. կենդանի քաշ ունեցող վարազը, վոր հասել է սեռական հասակի (1 կ. 4 մ.—1 գ. 6 մ.), այդ տեսակ վարազի որաբաժինը հարկավոր է կազմել այն ձևով, վոր որաբաժինը $\frac{1}{2}$ մասն ընկնի ուժեղ կերի հաշվին:

Համաձայն նրա կենդանի քաշին, վարազին պետք է տալ 3,3—4,0 կերի միավոր կլգ. և բեղմնավորման ժամանակ ավելացնել 0,5—0,6 կերի միավոր, այսինքն՝ ընդամենը 3,8—4,0, վոր կախումն ունի կենդանի քաշի տատանումներից:

ա) Յեթե տնտեսութունն ունի հետևյալ կերերը՝ գարի, թեփ, կամ ալյուր, կարտոֆիլ և թան—տրվում է՝

գարի	1,0 = 1 կերի միավոր	1,5 կլգ.	=	1,5 կ. մ.
թեփ	1,2 = 1 »	1,2 »	=	1 »
կարտոֆիլ	4,2 = 1 »	4,20 »	=	1 »
թան	8 = 0,8 »	11,0 »	=	1 1 »
		<hr/>		
	3,8 »			4,6 »

բ) Յեթե տնտեսութունն ունի կեր—վարսակ, խոզակազին, լավ մարգարեանի խոտ և կերի ճակնդեղ,

տրվում է հետևյալ կերաբաժինը.

1,2 կլգ.	=	1 կերի միավ.	վարսակ	1,8 կլգ.	=	1,5 կ. մ.
0,85 »	=	1 »	խոզակաղ.	1,4 »	=	1,5 »
2,5 »	=	1 »	մարգ. խոտ.	2,0 »	=	0,8 »
7,28 »	=	0,8 »	կերի ճակնդ.	7,28 »	=	0,8 »
		<hr/>				
	3,8 »					4,6 »

ՋԱՆԵԼ ՅԵՎ ՇՂԻ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ, ՊԱՇԵԼԸ, ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Սովորաբար ջահել մերուններին ծածկում են 12 ամսական հասակից: Բայց յեթե նրանք նորմալ կերպով զարգացել և հասել են 80—90 կլգ. կենդանի քաշի, այդ դեպքում նրանց կարելի է զուգավորել 10 ամսական հասակում: Իր ժամանակին կատարած բեղմնավորումն ամենալավ յերաշխիքն է կաթնատու, լավ մերուններ ստանալու համար: 15—16 ամսական հասակում ուշացած բեղմնավորութունը հաճախ բացասաբար է ազդում մերունների կաթնատվության վրա:


Յերիտասարդ առաջնածին մերուններից ծծող խոճկորներին հեռացնելուց հետո անհրաժեշտ է նրանց 3—4 ամիս հանգիստ տալ և այդ ժամանակ նրանց չզուգավորել, վորպեսզի մարմինը հարավորութուն ունենա ամրապնդվելու և զարգանալու: Թողորի ցանկութունը (ծորանքը) սովորաբար աճում է 12—36 ժամ և արտահայտվում է արտաքին սեռական գործարանների ուռչելով և կարճրելով, կենդանու անհանգստությամբ և այն:

Վորպես կանոն, ցուլի յեկող մերունին պետք է տանել վարազի մոտ և զուգավորել մեկ անգամ միայն, ուշադրությամբ հետևելով կանոնավոր բեղմնավորմանը:

Իսկ յեթե կոյտնտեսութունում, խորհանտեսութունում կան ավելորդ վարազներ, նրանք քիչ բեռնվածության դեպքում մերունին պետք է զուգավորել 6—12 ժամ հետո՝ յերկրորդ անգամ, նոյն վարազով կրկնակի զուգավորումը մեկ ծորանքի ընթացքում բավականին կըճատում է ստերջ մերունների սովորը:

Արդյունաբերական խոզաբուծության մեջ միջանի վարադ
ունենալու դեպքում հնարավոր է կիրառել խմբովին զուգավորում,
այսինքն՝ մեկ վարազով ծածկում են 15—20 մերուկ:

Այդ դեպքում, չերբ վարազը ծանր է, անհրաժեշտ է ոգտվել
զուգավորման հատուկ սարքով:



Նկ. 18.

Բեղմնավորման դադար:

հետո 18—23 օրվա ընթացքում, այսինքն՝ յերբ սովորաբար
ծորանքը կրկնվում է, ստուգել այդ օրերը և չհղիացած մար-
րերին թողնել վարազի մոտ՝ բեղմնավորելու համար:

Մերունների և նրանց պտղի կանոնավոր զարգացումն
ապահոված պիտի լինի.—

- ա) բավարար բանակությամբ կերով,
- բ) կենդանու աճեցողությանը և առողջությանը նպաստող
բավարար չափի սպիտակուցներով և վիտամիններով,
- գ) հանքային աղերով,
- դ) ամառն արոտատեղերով և ձմեռը խոտով ու բակլայա-
բույսերով,
- ե) ձմեռը տևական զրոսանքով,
- զ) չոր, մաքուր, լուսավոր, լավ ողափոխության ունեցող
չենքով:

Յերիտասարդ մերուններին պետք է կերակրել նորմանե-
րով: Կերաբաժինն իր մեջ պետք է պարունակի հետևյալ հիմ-

նական կերերը—խոտացրած (ուժեղ), հյութալի, կանաչ, կոպիտ
և հանքային:

Հյութալի կամ կանաչ կերերը պետք է մանեն որաբաժինի
մեջ 30% -ից վոչ պակաս՝ 50% -ից վոչ ավելի կերի միավոր-
ներ ամբողջ տրվելիք կերից, կոպիտ կեր՝ 5-ից մինչև 10% ,
հանքային աղեր՝ 0,2—0,5% և խոտացրած կեր՝ 64% -ից վոչ
ավելի և 39% —40% -ից վոչ պակաս: Մարերին վիտամինով
ապահովելու համար անհրաժեշտ է տալ ձմռանը—արմատա-
զտուղներ՝ և զնդապտուղներ, կամ դդում, առվույտի կամ
յերեքնուկի խոտ, իսկ ամառը՝ կանաչ կեր (առվույտ, յերեք-
նուկ, վիկ, վարսակ, սոյա և այլն):

Հանքային բաղադրությամբ կերն ապահովելու համար ան-
հրաժեշտ է տալ ծեծած կափիճ, ածուխ, արված և մանրաց-
ված վոսկրներ, ամառը՝ բակլայաբույսեր, կանաչ խոտ և այլն:

Պետք է խուսափել մերունների չափազանց ճարպակալու-
մից, վորովհետև ճարպակալված մերունները ծնում են թուլ
և վոչ կենսունակ խոճկորներ. նկատելի չե նույնպես նրանց
մկանների ճարպալին գերաճումը: Բացի դրանից, իրենց դան-
դաղկոտության շնորհիվ ճարպակալված մերունները հաճախ
իրենց խոճկորներին տակով են անում և սպանում:

Ընդ՝անրապես հղի մերունների և մասնավորապես ջահել-
ների կերաբաժինն չափի խառնել մեծ չափով յեզիպտացորեն,
վերջինս պիտի կազմի ամբողջ հացահատիկային կերի 35—40%
կերի միավորներով, իբրև վերջնական չափ:

Միշտ լեզիպտացորենով կերակրելը բերում հասցնում է
նրան, վոր՝

- ա) խոճկորները մեծ մասամբ ծնվում են օտակած կամ
թուլ, բ) ընչ թվով խոճկորներ են ծնվում, գ) վաղաժամ են
ծնվում, դ) մալմի մեջ ֆոսֆորա-կրային աղերի անբավարար
լինելու հետևանքով մերունները տրամադիր են լինում իրենց
ձագուկներին ուտելու, ե) մերունների կաթնատվությունը
նվազում է:

Զուգավորելուց հետո մերունները պետք է պաշտպանվեն

ախն բարրից, վորը վիժելու պատճառ կարող է լինել, ինչպես, որինակ չի կարելի հղի մերուններին վիշացած, մամլած կեր տալ և նույնպես՝ սառած արմատապտուղներ և գնդապտուղներ:

Անհրաժեշտ է խուսափել հղի մերուններին խիստ սառը ջրով ջրելուց: Հղիներին խոզաբներում խմբակներով 5—10 գլխից ավելի պահել ախն պալմանով, վորը ըստ հնարավորության ընտրված լինեն քաշով, հասակով, բնավորությամբ միատեսակ մերուններ:

Անհանգիստ լեզուներին և կռվողներին պետք է պահել առանձին շենքում, վորովհետև այդ տեսակ մերունները կարող են ուրիշների վիժման պատճառ դառնալ:

Ծննդաբերությունից մի ամիս առաջ բոլոր մերունները պետք է տեղավորված լինեն առանձին շենքում: (Սողը ծնում է գուգավորվելուց 3 ամիս, 3 շաբաթ և 3 օր հետո — միջին թվով 114—116 օր):

Ռիմնակելի կերաբաժիններ.— 1. 120 կգ. կենդանի քաշ ունեցող շատի մերունին պետք է տալ 3,5—4,0 կգ. կերի միավոր:

Յեթե տնտեսությունն ունի գարի, կարտոֆիլ, խոտ — տըրվում է՝

գարի	2,0 կգ. = 2 կերի միավ.	20 կգ. = 2 կ. մ.
կարտոֆիլ . 4,20 » = 1 » »	4 20 » = 1 » »	
յերեբն. խոտ 1,1 » = 0,5 » »	2,2 » = 1 » »	
	<u>3,5 » »</u>	<u>4 » »</u>

և 15 գրամ հանքալին աղեր (կալիև, վոսկրի ալյուր):

Նույն քաշն ունեցող ստերջ, շահել մերունին տալիս են 3,3—3,7 կերի միավոր:

2. 260 կգ. կենդանի քաշ ունեցող հասակավոր մերունին տալիս են 3,7 կգ. կերի միավոր:

Յեթե տնտեսությունն ունի գարի, յեզիպտացորեն, կանաչ խոտ (վարսակախառն վիկ), տալիս է՝

գարի	0,7 = 0,7 կերի միավոր
յեզիպտացորեն . 1,42 = 1,5 » »	
կանաչավոր խոտ	
(վարսակ-վիկ) . 13,5 = 1,5 » »	
	<u>3,7</u>

Հանքալին աղեր 15—20 գրամ:

Այս յերկու սրինակելի կերաբաժնից պետք է յեզրակացնել, վոր շահել խոզերին, վորոնք դեռ իրենց աճեցողությունը չեն վերջացրել, անհրաժեշտ է սննդաբար կեր տալ ավելի շատ, քան հասունացածներին:

ԱՃԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԱՑՐԱԾ ՀԱՍԱԿՎՈՐ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄԲԸ, ՊԱՀՊԱՆԵԼԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Հասունացած մերուններին ծածկելու ամենալավ ժամանակը պետք է հաշվել նրանցից խոճկորները բաժանելուց 2 օր հետո: Մերունների մեծամասնությունն այդ ժամանակ ցույթ լին գալիս և դա պետք է ոգտապորժել: Մերուններն այդ ժամանակ սովորաբար լլար են լինում, շուտ և հեշտությամբ բեղմնավորվում են: Որական արվելիք կերաբաժնում հյութալի և կանաչ կերի քանակը, ստերջ և հղիության առաջին 78—80 օրվա ընթացքում, մերուններին պետք է կազմի ամբողջ կերաբաժնի 40—45% ից վոչ պակաս կերի միավորներով: Կուպիտ կերերի քանակը ամբողջ կերաբաժնի 5—10% ից չպետք է գերազանցի կերի միավորներով: Կերի մեացած մասը կազմում է խոտացրած կերը (45—55%): Հասունացած մերունների ճարպակալելու արամաղիր յեղած դեպքում, պետք է խիստ հետևել նրանց և ճարպակալելու դեպքում կերը պակասացնել (կարտոֆիլ, յեզիպտացորեն, խոզակաղին), վորոնք նպաստում են ճարպակալելուն: Հանքալին կերերի, նույնպես և վիտամինների կարիքը ապահովելու համար, ամատը մերուններին անհրաժեշտ է պահել արսաբատեղում, իսկ ձմառը տալ ավալուտի, յերեքնուկի խոտ, մսավոսկրալին ալյուր, ձեճած կալիև, ածուխ:

Ղահել մերուսների խնամքի մասին վերևում բոլոր ասածը նույնությամբ վերաբերվում է նաև ծեր, հզի մերուսներին:

Սողաբուծական խորհ. և կոլտնտեսությունների հիմնական խնդիրն է լինելու՝ ձգտել մեկ տարվա ընթացքում ստանալ 2 սերունդ, իսկ հետագայում 2¹/₂ սերունդ, այսինքն լերկու տարում 5 սերունդ:

Հաշվի առնելով մերուսների բնդհանուր թվից տարեկան միջին թվով վերոհիշյալ քանակությամբ սերունդ ստանալու դժվարություններն սկզբնական շրջանում, համենայն դեպս վորպես մինիմում պետք է հաշվել տարեկան 1,5 սերունդ ցեղական խոզաբուծությունից և 2 սերունդ արդյո նաբերականի համար:

Անըրաժեշտ է խուսափել ձմեռվա ամիսներին - նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար և փետրվար - սերունդ ստանալուց, նկատի ունենալով մատաղ խոճկորների խնամելու դժվարությունները:

Մերուսների ծնելու ժամկետները ցույց տվող աղյուսակը պետք է կախված լինի խոզաբուծում, վորպեսզի վոչ միայն բույսերը և ավագ խոզապահը, այլև ամբողջ սպասարկող անձնակազմը գիտենա այս կամ այն մերուսի ծնելու ժամանակը:

Սող ծնելուց 8 օր առաջ սովորաբար սկսում է անհանգրստանալ, հուզվել, նրա պտուկներն ուռչում են, կուրծքը լցվում է և հաճախ բորբոքվում է: Այդ բոլորը ցույց են տալիս ծնելու մոտենալը:

Այդ ժամանակ անըրաժեշտ է հետևել, վոր մերուսը չմբսի, պիտի պահպանել միջանյիկ քամիներից:

Սովորաբար խոզաբուծում միջանյի վանդակներ հատկացնում են բացառապես մերուսներին՝ ծնելու համար: Այդ վանդակները պահվում են բացառիկ մաքրությամբ, առատությամբ ցամքար են փռում և առանձին հսկողություն տակ պահում:


Ծնելուց միջանյ ժամ առաջ խոզը քանդում է ձգնոտը, իրեն համար բուն է շինում, հուզվում է և հենց այդ ժամանակվանից պետք է ուժեղացնել որպայանի հսկողությունը:

Ծնելու ժամանակ պետք է ներկա լինի որպայա՛ր, վորի պարտականությունն է ցույց տալ առաջին ոգնությունը ծնելու ժամանակ այսինքն՝

ա) նոր ծնված խոճկորի բերնի և ըթի լորձուկները սրբել մաքուր շոր շորով:

բ) սրբած, շոր խոճկորի պորտալարը կտրել, թողնելով մալը 5-6 սմ. միայն:

գ) առանց կյանքի նշանների ծնված խոճկորներին վոր պիտիք շատ հաճախ են պատանում, ինչպես լերկարատև ծննդաբերություն ժամանակ, նույնպես և մերուսների ճարպակալության ժամանակ, խոճկորներին կենդանացնելու միջոցներ ձեռք առնել: Իսկ համար արագ մաքրում են լորձուկներից բերանը և ըթի՛քը, ավով բավական ուժեղ խփում են խոճկորի աղոթքին և թեթև կերպով կողքերին, հետո արորում են կուրծքը և կողքերը, կամ թե չե գրանից առաջ խոճկորներին դնում են այնպիսի տաքություն ունեցող լեփած ջրի մեջ, ուր ձեռքը հազվե է դիմանում. աշխատելով այդ դեպքում, վոր ջուրը չցցվի ականջները, բերանը և ըթի՛քը, և նրան մինչև 15-20 րոպե տաքացնելուց հետո, ձեռք են առնում վերոհիշյալ միջոցները շնչառություն առաջացնելու համար:



Նկ. 19.

Նորածին խոճկորների վանդակ, վորտեղ դրվում է և առաջին 3-4 օրը:

Ծնված խոճկորներին խսկո-յն և լեթ դնում են արկղի մեջ, վորտեղից մոր մոտ են թողնում լուրաքանչուր 2-3 ժամից հետո: Արկղում խոճկորներին պահում են 3 օրից վոչ ավելի, վոր ընթացքում մալը պետք է ամբողջովին լնտելանա ձագուկներին: Մաքուր և վոչ սառը ջրով տաշտակը պետք է լինի վանդակում, ինչպես ծննդաբերության ժամանակ, նույնպես և նրանից 1-2 օր հետո:

Այն մերուսներին, վորոնց նկատմամբ կիրառվել են մի շարք միջոցներ, բայց նրանք շարունակում են և հետագայում իրենց խոճկորներին ուտել՝

Գետը և խրատանի (выбравать) և հանձնել բտելու համար:

Ծննդաբերութիւնը վերջանալուց հետո անհրաժեշտ է կատարել խոճկորնների առաջին խոտանում և նրանց մեջ բաշխել ծծմոր պտուկները: Չահել մերունների (առաջին և յերկրորդ ծննդաբերում) տակ պետք է թողնել 9—10 խոճկոր, իսկ յերրորդ ծննդաբերութիւնից հետո մերունի տակ թողնել անքան խոճկոր, վորքան առողջ պտուկներ ունի նա:

Թույլ, նիհար, բայց հետուլքը լայն, յերկար խոճկորներին պետք է տալ առաջին ավելի կաթնատու պտուկները, ուժեղ յերկարներին—մըջին պտուկները և կարճ խոճկորներին (հասակով նվազ)—ամենավերջին, ավելի քիչ կաթ ունեցող պտուկները:

Մերուններն իրենց խոճկորներին մարմնով չարտելու համար անհրաժեշտ է՝ 1) 3 որ անընդհատ խողի վրա որպայանգիտող նշանակել, 2) վանդակի շուրջը 25—30 սմ. պարկերից հետո և նույն բարձրութեամբ ձողակներից կամ քանոնակերպ ձողերից կառուցել փակոցներ:

Այն դեպքում, յերբ մայրը պառկում է խոճկորներին կերակրելու համար, իր ծանրութեամբ նա հենվում է վոչ թե վանդակի պատին, այլ փակոցին, իսկ խոճկորները մնալով փակոցից դուրս, ազատվում են կոխկալելու վտանգից:

ԾԾՄՈՐ ԽՆԱՍՔԸ, ՊԱՀԵԼԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ.

Նոր ծնած մերունին չի կարելի կերակրել ծննդաբերութիւնից հետո 10—12 ժամից առաջ: Այդ ժամանակ նրան պետք է տալ սենյակի տաքութեան շուր միայն: 15 ժամ հետո պետք է տալ մինչև 0,4 կլ+ շրում խառնած ուժեղ կեր: Ծնելուց հետո առաջին 2—4 որը մերունին պետք է տալ նվազացրած կերաբաժին, որաբաժնի 50% -ից վոչ ավելի:

Նայած նրա կուրծի զրուխանը՝ 4-րդ որվանից սկսած կերի քանակը հետզհետե ավելացնում են այն հաշվով վոր ծնելուց 7—8 որ հետո համնի լրիվ կերաբաժնին:

Ծննդաբերութեան առաջին 3 որը ամենալավ կերը պետք է հաշվել ազացած վարսակն ու ցորենի թեփերը:

Ծննդաբերութիւնից հետո, յերբեմն մերոնների աղիքների գործունեութեան ժամանակավորապես թուլանալու հետևանքով նկատվում է փորկապութիւն, վորի հետևանքով կաթնատվութիւնը պակասում է և վորակը փոխվում:

Այդպիսի դեպքերում խոճկորների փորը լուծում է, նրանք նիհարում և սատկում են: Փորկապութիւնը կանխելու նպատակներով անհրաժեշտ է ծննդաբերութիւնից հետո առաջին որվա ընթացքում մերունին թանձր հացահատիկային կեր չտալ:

Ծծմորը պետք է կերակրել նորմաներով: Ծիծ տալու շրջանի նորմաները հետևյալներն են, ըստ վորում հաշվը կազմվում է 10 գլ. խոճկորների կերակրելու համար գոյացնող կաթի հաշվով (Պոպովի նորմաները):

ԿԵՆԴ. ՔԱՇ	ԱՃՈՂ.—ՉԱՀԵԼ	ՀԱՍՈՒՆԱՑԱԾ
	Մինչև 3 ծննդաբերութիւնը մայրերին կերի միավորներով	3-րդ ծննդաբերութիւնից հետո կերի միավորներով
140	6,0	4,3
160	6,3	4,7
180	6,5	4,8
200	6,7	5,2
220	6,7	5,5
240	6,7	5,7
260	6,8	6,2
300	6,8	6,5
320	6,8	6,8

Ծծմորերի համար ամենալավ կերը հանդիսանում է ա) հյութալի և կանաչ կերերից—ձակնդեղը, գրուժը, կարտոֆիլը, առվալար, յերբերակը, սոյան, վիկը, վարսակը, բ) խոտացրած կերերից—ազացած հատիկներից վարսակի, գարու, ցոր-

բենի թեփերը, գ) կոշտ կերերից—խոտեր—առվուլտի, յերեք նուկի, վիկի, սոլայի: Բացի դրանցից, ծծմալրերի կերին պետք է խառնել մինչև 10% կենդանական կեր (արլան, մսա-վոսկրային ալուր), նույնպես և անհրաժեշտ է տալ փայտի ածուխ, մոխիր, կավիճ, այրված և մանրած վոսկրներ, կամ 40% կավճից, 40% վոսկրից և 20% կերակրի աղից կազմված խառնուրդ: Հանքային խառնուրդը լավ է տալ առանձին տաշտերում, վորպեսզի խոզը կարող առնուի իր ցանկութան շափով:

Ծծմալրերի որարածին, վորպես պարտադիր կեր, պետք է խառնել հյութալի կամ կանաչ կեր (20—30%), նույնպես և բակլայաբույսեր ամբողջ կերարածինից 5-ից 10% կերի միավորներով:

Մսնդարերու թյունից 4—5 որ հետո տաք, արևոտ որերին ոգտակար է մերուկն խոճկորների հետ դուրս բերել գրասանքի, յուրբանչուր մերուկի համար խոզագոմին կից կառուցված բակում: Առաջին որերը պետք է դուրս հանել 15—20 րոպե, ապա քայլում բաց ոչում մնալն աստիճանաբար ավելացնում են:

ԽՈՃԿՈՐՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼԸ, ՊԱՇԵԼԸ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ


Խոճկորների զաստիարակութունը, մանավանդ կուլտուրական ցեղի խոճկորների, հեշտ գործ չի, պահանջվում է հատուկ գիտելիքներ, զգալի շափով աշխատանք և ուշադրութուն:

Առաջին յերկու շաբաթը խոճկորները կերակրվում են բացառապես իրենց մոր կաթով: Յորրորդ շաբաթի սկզբից խոճկորների անհրաժեշտ է վարժեցնել կոշտ կերի, առլով նրանց հացահատիկներ: Նույն ժամանակից սկսում են կերակրել նաև կովի կաթով, յեթե մոր կաթը բավարար չէ և խոճկորները պարզապես սոված են մնում: Անարատ կաթը, անտեսութան կովերի տուրբերկույրից (թորախտ) կամ այլ հիվանդութուններից ապահով լինելու դեպքում, պետք է տալ հում և գոլ

վիճակում: Իսկ յեթե հոտում տուրբերկույրոցով կամ կասկածելի անասուն լինի՝ խոճկորներին արվող կաթը նախապես պետք է յեռացնել կամ, ավելի լավ է, տաքացնել մինչև 75° Ցել. (պատերի դացիա) կես ժամգա ընթացքում, վորովհետև այդպիսի շերմաստիճանը միանգամայն բավարար է կաթն անջնաս դարձնելու համար: Խոճկորներին արվող կաթը թողնում են տաշտերի մեջ 30 րոպեից վոչ ավելի, վորից հոտս վերցնում են և տալիս են ավելի բարձր հասակ (2—4 ամսյա) ունեցող խոճկորներին կամ թե չէ ծծմալրերին:

Խոճկորներին կերակրելն անհրաժեշտ է կատարել խոճկորների ճաշարաններում, վորի համար մոր վանդակի կեսը ցանկապատում են և այդ ցանկապատի մեջ յեղած անցքից խոճկորներն ազատ անցնում են իրենց ճաշարանը:

Խոճկորներին կոշտ կերի վարժեցնելու ամենալավ կերը յերեք շաբաթական հասակում հանդիսանում են ամբողջ հացահատիկները—վարսակը, գարին և ցորենի մնացորդները:



Նկ. 20.

Խոզարան՝ խոճկորների կերակրման բաժանմունքով, միջնորմը անհրաժեշտութան դեպքում հեռացվում է:

Չորրորդ շաբաթվա սկզբից անհրաժեշտ է սկսել խոճկորներին տալ փայտածուխ և կավիճ վարսակի, գարու և ցորենի մնացորդների, աժուխի և կավճի խառնուրդով տաշտը մշտապես պետք է գտնվի խոճկորների բաժանմունքում մինչև նրանց սերուններից բաժանելը: Արվա ընթացքում չկերած կերը հենց նույն օրը փոխարինվում է թարմ կերով:

Հինգերորդ շաբաթվա սկզբին անհրաժեշտ է կերարածին մեջ մտցնել նաև հացահատիկային աղացված խառնուրդ: Այդ խառնուրդը պետք է շաղախել յերեսը քաշած կաթով կամ շոով

և թանձր խմորի վիճակում, բայց լավ ե հացահատիկի մանրը-
վածք խառնուրդը տալ չոր վիճակում:

4-րդ շաբաթվա վերջից անարատ կաթն աստիճանաբար
պետք ե փոխարինել լեռեսը քաղած կաթով և այդ փոխարի-
նումն ավարտել 7-րդ շաբաթվա վերջին: 4 շաբաթական հա-
սակից խոճկորներին պետք ե վարժեցնել արոտավայրերի, կերի
և ընդհանրապես մերուների հետ զբոսանքի:

Վորպես կանոն պետք ե հիշել, վոր ծծկեր խոճկորներին
չպետք ե տալ արմատապտուղներ և գնդապտուղներ: 8-րդ շա-
բաթից սկսած խոճկորներին բաժանում են մորից: Այդ զոր-
ծողութունը կատարվում ե աստիճանաբար՝ մի շաբաթվա լն-
թացքում:

Անհրաժեշտ ե խոճկորներին բաժանել մորից և առաջին
որը նրա մոտ ծծելու բաց թողնել նրանց 5 անգամ, 2-րդ որը
4 անգամ, 3-րդ որը—3 անգամ, 4-րդ որը—2 անգամ և 5-րդ
որը—1 անգամ:

Սոճկորներին բաժանելուց հետո մերուներն հեռացնում են
իր վանդակից և աշտեղ են բերում խոճկորներին: Մերուների
վանդակից հեռանալն, այլ վոչ թե խոճկորներից, ամենից լավ
ե, վորովհետև խոճկորները, վորոնք ընտելացել են այդ վան-
դակին, քիչ են հուղվում և հեշտությամբ են տանում մորից
բաժանվելը: Սոճկորներին զատելուց հետո մոր կերաբաժինն
աստիճանաբար բշտցնում են և հասցնում են ստերջների նոր
մային:


Այդ շրջանում խոճկորներին խնամելու ամբողջ ուշադրու-
թյունը կայանում ե հետելալում՝

ա) անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել, վոր խոճկոր-
ների վանդակում լինեն փոսեր, փորվածքներ, վորպեսզի մեզը
չլճանա: Սոճկորներն այդ մեզը խմում են և զրա հետևանքով
հիվանդանում են փորլուծով, վորը գժվար ե բուժվում: Վան-
դակներից գոմաղբի հավաքելը և չոր, փափուկ ցամքար փռելը
պետք ե կատարվի օրական լեռկու անգամ՝ առավոտյան և լե-
քեկոյան:

Եարաթը մի անգամից վոչ պակաս անհրաժեշտ ե վան-

դակն ախտահանել կրի լուծվածքով և այդ վիճակում պահել
4 օր:

Այդ ժամանակ մորը և խոճկորներին փոխադրում են այլ
վանդակ: Մերուների և խոճկորների կերակրի տաշար պետք ե
խնամքով մաքրել կերից, լավ լվանալ ամեն անգամ և կրի լուծ-
վածք քսել:



Նկ. 21.
Սոճկորների կերակրատարները:


Մվելի լավ ե ծծմայրերի և խոճկորների համար լեռկու-
կան առջտ պահել, վորպեսզի մեկը միշտ հնարավոր լինի լեռ-
թարկել ախտահանության և հողմահարության՝ արեի տակ:



Նկ. 21-ա.
Սոճկորների կերակրատարները:

Մաշիլը մաքուր պահելու համար անհրաժեշտ ե մերուների
և խոճկորներին տարվա տար ժամանակ լողացնել: Վաշիլ-
ներ լեռկալու դեպքում՝ դիմել անասնաբուժի:

կերի փոփոխութիւնը պետք է մտցնել աստիճանաբար: Ենթի հատակի տաքութիւնը, վորտեղ գտնվում են մերունները խոճկորների հետ՝ շատ ցած չպետք է լինի (7° Յելսիուսից)



Նկ. 31. ք.
խոճկորների կերակրատաշտերը:

վոչ ցած), նուէն պես և շատ բարձր (12—14° Յելս.) և, վոր գլխավորն է, խիստ տատանումներ չպետք է լինեն: Մերուններին և խոճկորներին պահպանել միջանցիկ քամիներից: Սկսած 10 որակի հասակից անհրաժեշտ է, վոր մերունները խոճկորների հետ ամառը ժամանակի մեծ մասն անցկացնեն մաքուր ոդում՝ խոզագոճերին կից կառուցված ծածկերի տակ:

Մերուններին և 2 շաբաթականից վոչ պակաս խոճկորներին ձմռանը 4—5° Ց. տաքութիւն ժամանակ պետք է բաց թողնել ծղոտ փռած բակը՝ 10—15 րոպե:

Խոճկորներին մերունից բաժանելուց հետո 2 շաբաթվա ընթացքում յերեսը քաշած կաթի կամ ընդհանրապես կաթի ավելցուկների պակասութիւն գեպրում, վերջինս աստիճանաբար փոխարինվում է ջրով: Յեթե խոճկորները մինչև մորից բաժանվելն արածել են արոտատեղում և սովոր են կանաչ կերին, ալդ զեպրում վերջինս կարելի յե մտցնել կերաբաժնի մեջ միանգամից, իսկ յեթե խոճկորները չեն ոգտվել կանաչ կերից, ալդ զեպրում նրանց պետք է սովորեցնել 10—15 որ անց՝ մորից բաժանելուց հետո և անցնել կանաչ կերով կերակրելու և կամաց-կամաց 5—7 որվա ընթացքում, բաց թողնելով առաջին որը 1—2 ժամ, յերկրորդ որը՝ 2—3 ժամ և այլն:

Տասը շաբաթական հասակից սկսած խոճկորներին անհրաժեշտ է վարժեցնել արմատապտուղների և զնդապտուղների:

Հյութալի կերերի քանակը կերաբաժնի մեջ չպետք է 0,5—1,0 կգը. գերազանցել 4-րդ ամսվա ընթացքում հոթալի կերերի քանակը կարելի յե հատցնել ամբողջ կերաբաժնի մինչև 25—40 % ը կերի միավորներով:

Կարտոֆիլը տալիս են սկսած 4 ամսական հասակից և տաւանվում է ամբողջ կերի 30—50 % սահմաններում:

Կարտոֆիլը տալիս են չեփած վիճակում, իսկ մնացած հոթալի կերերը՝ միայն հում վիճակում:

Առաջարկում ենք հացանատիկների հետևյալ խառնուրդները.

1) Վարսակ	40 %	2) Վարսակ	40 %
Գարի	40 %	Թեփեր	40 %
Քուսպ	10 %	Քուսպ	20 %
Ցորենի թեփ	10 %		
3) Վարսակ ժանր	60 %		
Գարու »	40 %		

Կաթնալին մնացորդների առատութիւնը զեպրում ուղ խառնուրդների յուրաքանչյուր կրկնգրամին լավ է ավելացնել 1 1/2—2,0 կգ. յերեսը քաշած կաթ կամ 3,0—4,0 կգ. թան, կամ 4,0—5,0 կգ շինուկ:

Խոճկորներին ձմռանը պահելիս պետք է տալ մսավոսկրալին կամ վոսկրի այլուր կերաբաժնի 3 % քանակով կերի միավորներով, կավիճ, ածուխ և մոխիր անպայմանորեն խոզարուծութիւն մեջ մեծ կորուստներ և պատճառում խոճկորների փորահարինքը: Այս վերջինի պատճառն ամենից հաճախ լինում է՝ ա) Ծծմայրելի անկանոն կերակրելը, չափազանց կերակրելը, կերի խիստ փոփոխութիւնը, փշացած կերը,

բ) Մերուններին և խոճկորներին խոնավ, սառը և կեղտոտ շներում պահելը,

գ) Մերուններին ձագուկների հետ վաղաժամ արոտատեղ ուղարկելը,

դ) Խոճկորների վանդակներում լճացած մեղ լսմելը,

ե) Խոճկորներին արևից և մաքուր ոդից զուրկ պահելը,


ը) Մերուններին միակողմանի կերակրելը (վիտամինների անբավարար լինելը):

ԽՈՉԵՐԻ ԿԵՆՂԱՆԻ ՔԱՇԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Կերտքաժինը կադմելու համար պետք է անասունների դանի քաշն իմանալ:

Որճկորները և խոզուկների կենդանի քաշը վորոշում նրանց՝ զամբյուղների կամ արկոնների մեջ դրած սովորական կշեռքների վրա կշռելով:

Մեծ կենդանիներին լավ է կշռել ստանդարտական կշեռքներով, կամ յեթե դրա համար չլինեն հարմար կշեռքներ, այդ դեպքում հասակալոր կենդանիների քաշը կարելի յե վորոշել չափելով: Բայց ճիշտ ավյալներ կատարվեն միայն այն դեպքում, յեթե չափերը ճիշտ լինեն:



Նկ. 22.

Սողբը լողացնելու և կշռելու վանդակ:


Կշեռքների վրա կշռելու հարմարության համար գոյություն սենեն անիվներով հաստակ վանդակներ, վորը կարելի յե մտնեցնել ընդհուպ վանդակի կամ խոզագոմի դռներ և խոզին քշել վանդակի մեջ:

Չափելով կենդանի քաշը վորոշում են հետևյալ ձևով. դրա համար վերցնում են դուլմերի բաժանված մի ժապավեն, չափում են խոզի յերկարությունը՝ ծոծրակից սկսած մինչև պոչի արմատը և նրա (հաստությունը) առաջին վտանների անմիջապես կեսից:

Յերկարության և հաստության դուլմերը բազմապատկում են և ստացած թիվը բաժանում են 9-ի վրա, յեթե խոզը շատ զեղ է, կամ 10-ի վրա՝ յեթե միջակ զիրության է և 12-ի վրա՝ յեթե խոզը լողար է:

Բաժանելուց հետո ստացված թիվը պետք է բաժանել 2,5 վրա, կենդանի քաշը կիրոգրամներով ստանալու համար:

Մային բուսմը կատարվում է փոչ ճարպալին միս ստանալու համար: Ներկայումս այդ տեսակի բուսմը մեզ շատ է հեռաբերում, վորովհետև մենք մսի հարցի լուծումը մեր մտավոր խնդիրն ենք դնում:



Նկ. 22.

Կենդանի քաշի վորոշելը չափելու միջոցով:

Այդ տեսակի բուսմը կարելի յե կատարել Չահեղների, աճող կուլտուրական կամ խառնուրդ (կիսազաարյուն) խոզերի նկատմամբ, սկսած արդեն 4-5 ամսական հասակից:

Սովորաբար մսային բուսմը շարունակվում է 100-ից մինչև 120 ուր, վորը կախված է ուշխանանքը շրջապատող զանազան պայմաններից — բազմատեսակ կերերի առկայությունը, հարմար շենքերը, կանոնավոր խնամքը, կերակրելը և այլն:

Մային բուսմը սկսում են Չահել հասակից նրա համար, վորովհետև խոճկորներն այդ հասակում արագ են աճում և մեկ կիրոգրամ մսի հավաքման վրա քիչ կեր են սպառում:

Գրատությունը հաստատել է, վոր 3 ամսական խոճկորն իր մարմնի մի կիրոգրամ հավելումը ստանալու համար սպառում է 3,8 կլգ. հացանատիկ, 4 ամսական հասակում նույն խոճկորը 1 կլգ. հավելումի համար սպառում է 4 կլգ. հացանատիկ,

հինգ ամսականը — 4,2 կգ. հացահատիկ, վեց ամսականը — 5,2 կգ. հացահատիկ, յոթ ամսականը — 6 կգ. հացահատիկ:

Հետևաբար ամենից շատ ոգուտ են տալիս չահել խոճկորները:

Բուսմը կատարվում է վերևում հիշված նորմաներով:

Ամենալավ քաշը, վորին սովորաբար հասնում են բոված խոզուկները, 85 — 100 կգ. է:

Ճողին անպայման պետք է տալ խառը կեր, վորպեսզի նրա մեջ լինեն հացի (հացահատիկների թեփեր) մնացորդներ և վոչ հացի կերեր (արժատապտուղներ, կաթնեղենի մնացորդներ, շիջուկ): Վոչ հացի կերերով բովման սկզբում կարելի չէ փոխարինել կերի $\frac{1}{2}$ -ը, իսկ բովման վերջում կերի $\frac{3}{4}$ պետք է տալ հացի կեր (ուժեղ), իսկ $\frac{1}{4}$ -ը վոչ հացի կեր:

Որինակ՝ մսային բովման համար խոճկորին պետք է տալ նորմայով այնպես կեր, վոր իր ուժեղությամբ հավասար լինի 3 կգ. հացահատիկի կամ 3 կերի միավորի:

Այդ կերից մենք բովման վերջում կարող ենք տալ 2 կգ. հացահատիկ — 1,5 կգ. գարի (1,5 կերի միավոր) 0,6 կգ. (0,5 կերի միավոր) 4,2 կգ. կարտոֆիլ կամ յեթե տնտեսությունն ունի կաթնեղենի մնացորդներ և առվուտի խոտ, կարտոֆիլը կարելի չէ փոխարինել 5,0 կգ. թանեղենով (0,5 կերի միավ.) և 1,25 կգ. առվուտի խոտով (0,5 կերի միավ.):

Արդյունաբերական կուտնտեսություններում և խորհարնտեսություններում խոզերի բուսմը կատարվում է լմբակային ձևով:

Խմբակները վորոշվում են կենդանի քաշով:

1-ին խմբակ	25	մինչև	40	կգ.
2 »	»	40	»	60 »
3 »	»	60	»	80 »
4 »	»	80	»	100 »

Կենդանիներին բովման ընդունելու համար բոլորին կշռում են 6 ժամ առանց կերի և ջրի պահելուց հետո — վանդակների Ա Կ-ը նորից համարակալում են և բաժանում են ըստ խ'բերի և վանդակների: Վանդակներում մտցնում են միևնույն խմբակի

խոզեր՝ նայած վանդակի մեծությունը՝ 2, 3, 5 և 10 գլուխ, յեղներով այն հաշվից, վոր ամեն մի գլխին հասնի 0,6 — 0,9 քառ. մետր տարածություն: Վորքան խմբակը թեթևակշիռ լինի, այնքան պակաս տարածություն է պահանջվում ամեն մի գլխի համար, այսինքն 0,6 — 0,7 ք. մ., և վորքան ծանրակշիռ լինի, այնքան ավելի, այսինքն 0,8 — 0,9 քառ. մետր: Բովման ընթացքին հսկելու համար կենդանիներին կշռում են, ընդվորում կարելի չէ բոլորին չկշռել, այլ լուրաբանչյուր վանդակում կշռել մեկ կամ յեղիու խոզ, տվյալ վանդակից ամենից տիպիկներին ըստ գիրության և միջին կենդանի քաշի, և այդ խոզերին նշանակում են համապատասխան վստաելի նշաններով:

Կենդանիներին կշռում են կշեռքով բովման սկզբից, լուրաբանչյուր 20 որը մի անգամ, կերից առաջ, խոզագոմի աշխատանքի կանոնադրության մեջ հիշված ժամերին:

Յեթե խոզագոմերին կից կան բովման բազաներ — փարախներ — այդ ղեպքում կերակրել նրանցում, ըստ խմբակների:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՉԱԳՈՍԵՐՈՒՄ

Առավոտյան ժամը 6—10-ին տեղի չէ ունենում խոզերի հերթական կշռելը, կերի բաժանելը և ջրելը, զոմաղբի հավաքումը, ծղոտի փռելը, կենդանիներին մաքրելը:

Ժամը 12—1-ին կեր են տալիս և ջրում են:

Ժամը 3—6-ը ջուր են բերում, յեթե ջրմուղ չկա, կրում են կերերը, ցամքաբը, վառելիքը: Փռում են ծղնոտը, բաժանում են կեր և ջրում: Լվանում են տաշտակները:

Այս կանոնների համաձայն առավոտյան առաջին հերթին կենդանիներին կշռում են և ապա կերակրում և ջրում և վերջին հերթին կատարում են այլ աշխատանքներ:

Յերեկոյան առաջին հերթի անհրաժեշտ է կատարել բոլոր թված աշխատանքները, իսկ հետո կերակրում և տաշտակները լվանում են: Նայած տնտեսության ունեցած այս կամ այն կերի առկայություն, ըստ պրոֆ. Պոպովի նախատեսմամբ մսային բովման համար ամեն մի գլխի որինակելի կերաբաժինը կիլոգրամներով: Յեթե տնտեսությունն ունի ջուսպ, թեփ և կարտոֆիլ, տալիս են՝

Կենդանի քաշ	Քուլայ	Թեփ	Կարտոֆիլ	Կերի միավոր
25—40	0,3	2,0	1,0	2
40—60	0,4	2,0	2,0	2,5
60—80	0,45	2,4	2,25	2,85
80—100	0,4	2,5	2,75	3,15

Յեթե տնտեսությունն ունի քուլայ, թեփ, կարտոֆիլ, արմատապտուղներ.

Կենդանի քաշ	Քուլայ	Թեփ	Կարտոֆիլ	Արմատ.	Կ. մ.
25—40	0,3	1,5	1,0	2,0	2,0
40—60	0,4	2,0	1,0	3,0	2,5
60—80	0,35	2,5	1,0	4,0	2,85
80—100	0,3	2,9	1,0	3,5	3,15

Յեթե տնտեսությունն ունի քուլայ, թեփ, շիջուկ.

Կենդանի քաշ	Քուլայ	Թեփ	Շիջուկ	Կ. մ.
25—40	0,3	1,8	4,0	2,0
40—60	0,4	2,0	6,0	2,5
60—80	0,4	2,5	9,0	2,85
80—100	0,35	2,2	10,0	3,15

Յեթե տնտեսությունն ունի դարի, շիջուկ, կանաչ աուվուլո, կամ լերեքնուկ.

Կենդանի քաշ	Դարի	Շիջուկ	Կանաչ խոտ	Կ. մ.
25—40	0,4	9,0	3,5	2,0
40—60	0,8	9,0	3,5	2,5
60—80	0,8	12,0	3,5	2,85
80—100	0,8	15,0	3,5	3,15

Սոցակաղինը, վարպես ավելի ետան կեր, կաջելն լե տալ բաման շրջանի առաջին կեսում, փոխարինելով համապատասխան չափով կարտոֆիլը: Արտավայրերում պահելու մասին մենք վերեւում արդեն ասացինք, բայց այստեղ արդեն անհրաժեշտ ենք համարում հիշել, վոր լավ արհեստական արոտատեղերում, առվուլոսի, լերեքնուկի, վիկի, վարսակի առկայութեան դեպքում հնարավոր է բավող խոզերին ամբողջ օրերով թողնել արոտատեղերում և տալ նրանց լրացուցիչ հացի կերեր (հացահատիկի) ամբողջ կերի միմիայն 25 %-ի չափով և արն ել բաման վերջում:

Կիսանարպային բնում

Միս և ճարպ ստանալու համար կիսանարպային բնումը սովորաբար կատարվում է ավելի ուշ, քան մսային բնումը, այսինքն, խոզուկներին բնում են սկսած 7—8 ամսական հասակից և նրանք պատրաստ են լինում համարյա մեկ տարեկան հասակում, ունենալով 120—150 կգ. քաշ: խսկ լերեքնուկ ել ավելի:

Կիսանարպային բնումը տարբերվում է մսային բնումից նրանով, վոր այն խոզուկներին, վորոնք կերակրվում են մինչև 5—6 ամսական հասակը մսային բնումն նորմաներով, սկսում են կեր տալ ավելի մեծ քանակով, քան այդ տրվում եր մսային բնումն դեպքում, բնդվորում ավելցուկը տեղի լե ունենում այն կերերի հաշվին, վորոնք հարուստ են ածխածնածրությամբ, ինչպես, որինակ՝ կարտոֆիլը, խոզակաղինը, ճակնդեղը և զգումը:

Մսային և կիսանարպային բնումն նորմաների համապատասխան աղյուսակը:

Կենդ. քաշ	Մսայ. բն. նորմաներ	Կիսանարպայ. նորմ.
20—40	4,5 %	4,5 %
40—60	4,0 »	4,0 »
60—80	3,5 »	4,5 »
80—100	3,0 »	4,5 »
100—120	3,0 »	4,0 »

Տոկոսներ ասելով հարկավոր է հասկանալ հացահատիկի—
 գաբու քանակը, վորը վրցրված է, վորպես կերի սննդարու-
 թության ուժը վորոշելու չափ:

Իրանից հետոնւմ է, վոր կերակրելիս հարկավոր է վերց-
 նել վոչ միայն հացի կերեր (հացահատիկային), այլ և ուրիշ կե-
 րեր: փոխարինելով մեկ կերը մյուսով, այս գրքի մեջ բերված
 կերի միավորների աղյուսակի համաձայն:

Որինակ՝ ունենք 80 կգ. կենդանի քաշ ունեցող խոզուկ
 և նրան հատկացնում ենք կիսաճարպային բամբակ համար: Այդ-
 պիսի խոզուկին պետք է սալ որական իր կենդանի քաշի 4,5%
 հացահատիկ, այսինքն $80 + 4,5 = 3,6$ կգ. հացահատիկ կամ կերի
 այնպիսի քանակ, վորի սննդարարութունը հավասար լինի 3,6
 կգ. կերի միավորների:

Կերաբաժինները կարող են լինել

Գորի	2,0 կգ. = 2 կերի միավոր
Կարտոֆիլ	4,20 » = 1 » »
Ֆերեսը քաշ. կսթ	2,0 » = 0,3 » »
Թեփեր	0,4 » = 0,3 » »
	<hr/>
	3,6 կերի միավոր:

Յեթե անտեսութունը կարտոֆիլի չունի, այդպիսին կա-
 ռելի լե փոխարինել 0,85 կգ. խոզակաղինով, վորը, Հայաստանի
 պայմաններում նպատակահարմար է, նկատի ունենալով, վոր
 այն անտեսներում հնարավոր է հավաքել:

Կիսաճարպի լին բամբակ հատկացված խոզերի շարժումները
 պիտի կորճատե լինի, որական $1 - 1\frac{1}{2}$ փամ, վորպես զբոսանք:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոզարուծութան նշանակութունը, վորպես գյուղատն- աստության ճյուղի	3
Խոզարուծութան շահավետ կողմերը	4
Սոցիալիստական սեկտորն արդյունաբերական խոզարու- ծության ամուր հիմքն է	5
Ինչպես անտառային խոզարուծութունից անցնել կուլտու- րական խոզաբուծության	7
Ինչ ցեղի խոզեր պետք է բազմացնել	8
Անգլիական խոզերի տեսակները տարբերող նշանները	11
Սնդիական սպիտակ խոզ	13
Անգլիական սև խոզ - բերկիր	14
Խոզարուծութունն ազնվացնելու համար հարկավոր է արդ- րոք սանմանափակվել միայն կուլտուրական խոզի մեախղացիալով	15
Ինչպիսի խոզագոմ (խոզարներ) պետք է կառուցել	16
Կերակրելու հիմունքները	23
Ցեղական խոզերի համար կերաբաժին կազմելը	25
Ջանազան կերերի նշանակութունը	30
Կերակրելու և կեր պատրաստելու կանոնները	33
Խոզերին արոտատեղում պահելը	37
Ցեղական վարազի խնամելը, պահելն ու կերակրելը	39
Ջահել և հղի մերունների խնամքը, պահելը և կերա- կրելը	47
Աճեցողութունը վերջացրած հասակավոր մերունների խնամքը, պահելը և կերակրելը	49
Ծծմոր խնամքը, պահելը և կերակրելը	52
Խոճկորներին խնամելը, պահելը և կերակրելը	54
Խոզերի կենդանի քաշը վորոշելը	60
Մսալին բուսում	61
Աշխատանքի կանոնադրութունը խոզագոմերում	63

« Ազգային գրադարան



NL0286776

22 318

97712 50 000. (41). *



АТАБЕКОВ

ПРАКТИЧЕСКОЕ РУКОВОДСТВО СВИНОВОДСТВУ

Госиздат ССР Армянская
Фривань—1982